Թ Ր Ի Տ Ա Ն Ի Ա

ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Թագուհի Վիքթօրիա Ա. ծն .  
24 Մայ . 1819 , սկզբ . կառավ-  
20 Յունիս 1857 . ամուսն . 10  
Փետր . 1840 ընդ Ալպէրթ  
իշխանի ծնն . 28 Օգոստ . 1819  
որբեւարեալ 14 Գեկտ . 1861 .  
Գահաժառանգ Ալպէրթ իշխան  
Վալէսի , ծնն . 9 Նոյ . 1841 ,  
ամուսն . 10 Մարտ . 1865 ընդ  
Ալէքսանտրա իշխանուհւոյ (Տա-  
նիմարզի) ծնն . 1 Գեկտ . 1844 .  
Մայրաքաղաք Լօնտօն . բնա-

կիչ 5 միլիոն , բնակիչ երկրի  
30 միլիոն .

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն .

Զօրք 468,957 .

Նաւատորմիդ 1901 նաւ :



Տ Ա Ն Ի Մ Ա Ր Ք

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Քրիսթիան Թ. արքայ . ծնն .  
8 Ապրիլ 1818 . սկզբն . թագ .  
15 Նոյ . 1865 . ամուսն . 26  
Մայիս 1842 ընդ Լուիզէ դստեր  
Վիլհէլմի Հեսսէն-Քասսէլի որ  
է ծն . 8 Սեպտ . 1817 .

Մայրաքաղաք Քոբէնհակըն .  
բնակիչ 155 հազար . բնակիչ  
երկրի 1 միլիոն 800 հազար :

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն :

Զօրք 52,610 :

Նաւատորմիդ 58 նաւ :

Փ Օ Ր Թ Ո Ւ Կ Ա Ա

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Լուտովիկ Ա. արքայ ծն . 51  
Հոկտ . 1858 սկզբն . թագաւ .  
11 Նոյ . 1861 . ամուսն . 27  
Սեպտ . 1862 ընդ Մարիա Բիա  
դստեր Վիլթօր Էմմանուէլի որ  
է ծն . 18 Հոկտ . 1847 :

Մայրաքաղաք Լիդպպօն , բը-  
նակիչ 225 հազար . բնակիչ  
երկրի , 4 միլիոն .

Տիրող կրօնք պապականու-  
թիւն .

Զօրք , 70,658 .

Նաւատորմիդ , 43 նաւ , 544  
Թնդանօթով :



Ա Ի Ս Տ Ր Ի Ա

ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ

Կայսր Ֆրանձ Եօղէֆ Քարլ ,  
ծնն . 18 Օգոստ . 1850 , սկզբ .  
կառաւ . 2 Դեկտ . 1848, ամուսն .

24 Ապրիլ 1854 ընդ Էլիզա-  
Ամալիէ Օյկէնիէ ծնն. 24 Դեկ.  
1857 .

Գահաժառանգ Ռուտովֆ Ֆը-  
րանձ Քարլ Եօզէֆ, ծնն. 21  
Օգոստ . 1858 .

Մայրաքաղաք Վիէննա, բնա-  
կիչ 600 հազար , բնակիչ երկ-  
րի 56 միլիոն .

Տիրող կրօնք պապականու-  
թիւն :

Զօրք , 1 միլիոն 2,649 (°) .

Նաւատորմիդ 72 կտոր նաւ.  
522 թնդանօթով :



Գ Ա Ղ Ղ Ի Ա

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Նախագահ երկրի Մարա-  
ջախտ Մաք-Մահօն .

Մայրաքաղաք Փարիզ , բնա-  
կիչ 2 միլիոն , բնակիչ երկրի  
58 միլիոն .

Տիրող կրօնք պապականու-  
թիւն .

Զօրք 465,280-1 միլիոն 555  
հազար .

Նաւատորմիդ 556 նաւ :



ՍՊԱՆԻԱ

Երկիրը յուղեալ է Ամատէօս  
Թագաւորին Սրանիայէն հեռա-  
նալէն ի վեր հանրապետութիւն  
հրատարակուած է սակայն ա-  
պստամբութիւնք դեռ կը շա-  
րունակուին եւ երկրին վիճա-  
կը անյոյս է :

Մայրաքաղաք Մատրիտ, բնա-  
կիչ 776 հազար , բնակիչ երկ-  
րի 16 միլիոն :

Տիրող կրօնք պապականու-  
թիւն .

Զօրք , 80 հազարի որոշուած .  
Նաւատորմիդ 120 նաւ 787  
թնդանօթով :





Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

Կայսր Վիլհելմ Ա. արքայ թը-  
րուսիոյ եւ կայսր միացեալ Գեր-  
մանիոյ, ծնն. 22 Մարտ 1797.  
սկզբ. կառավ. 2 Յունիւ. 1861  
տնուանեալ կայսր Գերմանիոյ  
ի 1871, ամուսն. ի 11 Յունիս  
1829 Ավկուսթա (Սաքսոն-Վայ-  
մարի) իշխանուհւոյն հետ որ է  
ծնն. 50 Սեպտ. 1811. Գահա-  
ժառանգ Ֆրիտրիխ Վիլհելմ ծն.  
1851 Հոկտ. 18, ամուսն. 23  
Յունիւ. 1858 Վիքթորիա (Բրի-  
տանիոյ) իշխանուհւոյն հետ որ  
է ծնն. 21 Նոյ. 1840:

Մայրաքաղաք Պէրլին, բնա-  
կիչ 655 հազար, բնակիչ երկրի  
50 միլիոն 671 հազար.

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն.

Զօրք, 751,085.

Նաւատորմիդ 62 կտոր նաւ  
500 թնդանօթով:



Մ Ի Ա Յ Ե Ա Լ Ն Ա Հ Ա Ն Գ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Կռանթ ղօրապետ, Նախադահ.  
Մայրաքաղաք Վաշինկթօն,  
բնակիչ 40 հազար, բնակիչ  
երկրի 52 միլիոն.

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն.

Զօրք, 2 միլիոն.

Նաւատորմիդ 178 նաւ 1426  
թնդանօթով:



ՊԷԼՃԻԱ

ԹԱԽԱՆՈՐՈՒԹԻՒՆ

Լէօրօլտ Բ. արքայ, ծնն. 9  
Ապրիլ 1855, սկզբ. կառավ.  
10 Գեկտ. 1865. ամուսն. 25

Օգոստ. 1855 ընդ Մարի Հէն-  
րիէթթէ (Աւստրիոյ) որ է ծնն,  
25 Օգոստ. 1822.

Մայրաքաղաք Պրուքսէլ, բը-  
նակիչ 200 հազար, բնակիչ  
երկրի 5 միլիոն.

Տիրող կրօնք պապականու-  
թիւն.

Զօրք, 97,597-145 հազար :



Հ Ո Լ Ա Ն Տ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ուիլեամ Գ. արքայ, ծն. 19  
Փետր. 1817, սկզբ. թագաւ. 17  
Մարտ 1849, ամուսն. 18 Յուն.  
1859 ընդ Սօֆիա դստեր հան-  
դուցեալ թագաւորին Վիրթէմ-  
պերկի որ է ծն. 17 Յուն. 1818.

Մայրաքաղաք Հայ, բնակիչ  
38 հազար, բնակիչ երկրի 5  
միլիոն 760 հազար.

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն.

Զօրք, 90,251 յեւրոպա եւ  
ի Հնդկաստան.

Նաւատորմիդ 12% նաւ. 1245  
թնդանօթով :



ԶՈՒՅՅԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Էմիլ Վէլթի, Հանրապետա-  
կան Նախագահ.

Մայրաքաղաք Պէոն, բնակիչ  
երկրի 2 միլիոն 500 հազար.

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն.

Զօրք, 202,248 :



Ս Ք Ա Ն Տ Ի Ն Ա Ի Ի Ա

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Օսքար Ա. արքայ.

Մայրաքաղաք Սթօքհօլմ. բնա-  
կիչ 135 հազար, բնակիչ երկ-  
րի 5 միլիոն 800 հազար :

Տիրող կրօնք բողոքականու-  
թիւն .

Զօրք, 136, 807 .

Նաւատորմիդ 48 նաւ :



ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Գէորդ Ա. արքայ Հելլենայ  
ծն. 24 Դեկտ. 1845, սկզբ.  
կառավար. 6 Յուն. 1865, ա-  
մուսն. 27 Հոկտ. 1867 ընդ  
Օլիա դքսուհւոյ Ռուսիոյ որ է  
ծն. 22 Օգոստ. 1851 .

Մայրաքաղաք Աթէնք, բնա-  
կիչ 50 հազար, բնակիչ երկրի  
1 միլիոն 550 հազար .

Տիրող կրօնք յունադաւա-  
նութիւն .

Զօրք 51 հազար .

Նաւատորմիդ 54 նաւ :



ԻՏԱԼԻԱ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Արքայ Վիքթօր Էմմանուէլ,  
ծն. 14 Մարտ 1820, սկզբ. կա-  
ռավ. իբր արքայ Սարաէնիոյ  
25 Մարտ 1849 եւ իբր արքայ  
Իտալիոյ 17 Մարտ 1871, այրի  
20 Յունվ. 1855 իւր Ատէլաիա  
ամուսինէն .

Մայրաքաղաք Հռոմ, բնակիչ  
210 հազար, բնակիչ երկրի 25  
միլիոն .

Տիրող կրօնք պապականու-  
թիւն .

Զօրք 7 կամ 8 հարիւր հա-  
զար որոշեալ :

Նաւատորմիդ 22 նաւ զրահ.  
202 թնդանօթով :





ՊՐԱԶԻԼԻԱ

ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ

Կայսր Տօն Բէթրօ Բ. ծն. 2  
Դեկտ. 1825, սկզբ. կառավ.  
7 Ապրիլ 1851, ամուսն. 4  
Սեպտ. 1845 ընդ Թէրէզէ (Սի-  
կիլիոյ) իշխանուհւոյ, ծն. 14  
Մարտ 1822.

Գահաժառանգ Իզապէլլա իշ-  
խանուհի, ծն. 29 Յուլ. 1846,  
ամուսն. 15 Հոկտ. 1864 ընդ  
Լուտվիկ Ֆիլիբ (Օրլէանի իշ-  
խան) ծն. 28 Ապրիլ 1842:

Մայրաքաղաք Ռիօ-ժանէյրօ,  
բնակիչ 500 հազար, բնակիչ  
երկրի 8-10 միլիոն.

Նաւաստորմիջ 65 նաւ:



ԶԻՆ

ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ

Թօնկ-2է, կայսր Զինաց.  
Մայրաքաղաք Բէքին, բնա-

կիչ 2 միլիոն, բնակիչ երկրի  
350-400 միլիոն կռապաշտ:



ՀՆԴԿԱՍՏԱՆ

Այլ եւ այլ իշխանութեանց  
տակ.

Մայրաքաղաք Կալկաթա,  
բնակիչ 1 միլիոն, բնակիչ երկ-  
րի 220 միլիոն կռապաշտ:



ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ

Նաս-րէտ-տին Շահ.

Մայրաքաղաք Թէհրան, բնա-  
կիչ 100 հազար, բնակիչ երկ-  
րի 7-8 միլիոն մահմէտական:



ՃԱԲՈՆ

ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ

Բնակիչ Երկրի 55 միլիոն կը-  
ռապաշտ .

Մայրաքաղաք Եէտօ , բնա-  
կիչ 1 միլիոն 500 հազար :



ԽՐԱՏ ՊԱՏԱՆԵԱՅ

Ով պարմանիդ անփորձ և սէք  
Յո՛ղու ի մուսլ զիմեա՛ ու ի մէդ  
Դոյզն ի բացեայ հա՛ սպասէ լուռ  
Խոշող վերագ գաղան մի մուռ :

Ո՞ր փորձառու մարդկան է ահ  
Իսկ կոյր և վէս խօլայ տոյ մահ,  
Եւ կամ զհոգիս հիւժեալ հաշէ  
Եւ անկարկատ կենօք մաշէ :

Յերեւութից ձրդտիս ի գեղս  
Այլ ոչ տեսեալ ըզ ներքին մեղս,  
Բաւ էր հեռուստ կալ հիանալ  
Այլ ոչ մերձիլ ոչ միանալ :

Բազումք գրասն յօշյօշ հերձեալ  
Անզուսպ ի դմա կրբութ մերձեալ  
Յոյս բնութեհէ էր այնչափ ծեծ .  
Որչափ զանձնէ խոկային մեծ :

Գիտեմ՛ և գու խեղճ պատանի  
Վ աղես զոսկի տալ մատանի ,  
Առ որ ի սէք պյօօր յարիս  
Եւ կրեցդ ի հեշտ վարիս մարիս :

Եւ զի գժոխոց է սյդ մի խաղ  
Վ աղիւ տեսցես յորպիսի մաղ :

Մաղմաղիցիս ճրուբնչելով  
Բաղդեր ընդգեմ մըռընչելով :

Անսա՛ որդեակ, անսա ծերոց,  
Որ կեան յօգուտ անձանց մերոց,  
Ո՛րք ցուցանեն ի՛նչ ըզ վորձս յաղթել,  
Ու ի սիրտս պատրաստս յէն են մաղ-  
թել :

Արդ տուր խրատուց տեղի մի վայր  
Մի անարգեր զքո Հայր եւ Մայր,  
Անսա նոցա անձինդ առ գութ  
Մե՛ շրջել քաղցր արեւդ ի մութ :

Յայն զօրութիւն ժամքո զարդի  
Տեսցես զիա՛րդ բարւոյն մարթի,  
Կիր արկանել ե գեղ ի դոյն  
Իեղ զաւակունս ժառանգել մոյն :

Յայն ժամընութիւն Հաշտ՝ Հեշտ Հնչե  
Մորմնք առ քեղ ձայնիւ մընչե, —  
« Հա՛՛ ժուժկալուք առ այս Հասին  
« Յերկրավայել բաղդի մասին », :

Բ. Յ. ՎԱՐԴՈՒԿԵԱՆՅ



ԱՄՈՒՍՆԱԿԱՆ

Ինչպէս որ ընդհանուր կա-  
նոն մ'է ծնիլ, նոյնպէս ալ բը-  
նութեան հիմնական օրէնքնե-  
րէն մին է մեռնիլ, ուստի բնու-  
թեան վճարելի երկու օլարաք  
ունինք, ծնիլ եւ մեռնիլ :



Ամուսնական կենաց յարմար  
կը սեպուին այն անձինք որոնց  
մարմնական զարգացումը ա-  
ւարտեալ է եւ ծննդական գոր-  
ծարանք կատարելագործեալ են :



Կլիմայն՝ սեռն եւ կենցաղա-  
վարութիւնք ամուսնական յար-  
մարութեան ժամանակը կը զա-  
նազանեն .



Այրն առաւել ժամանակի է  
կարօտ ամուսնանալոյ քան թէ  
կինը :



Ձերմ կլիմայի բնակիչք աւել-  
լի սակաւ տարիներու կը կա-  
րօտին քան ցուրտ երկիրներու  
մարդիկ :

~~~~~

Կարճահասակք աւելի շատ  
յարմար կըլլան ամուսնութեան  
քան թէ նրբակազմ անձինք :  
Իսկ ամենէն ուշ այն տեսակ  
մարդիկ կրնան ամուսնանալ ու-  
րոնց վիզն բարակ է , կուրծքն  
նեղ , մորթը խիստ սպիտակ ,  
երեսներն կարմիր շրջանակեալ  
ուսերնին բարձր եւ ցցուած :

~~~~~

Կանուխ ամուսնութիւնք կը  
տկարացնեն զամուսնացեալս եւ  
ժամանակէն յառաջ կծերացնեն  
զանոնք նաեւ պատճառ կըլլան  
տկար սերնդոց հիմ դնելու :

~~~~~

Դեռահասակ աղջկունք ա-  
մուսնական կենաց անյարմար

են եւ միշտ վիժելու ենթակայ  
կըլլան :

~~~~~

Ուշ ամուսնացողն ալ բնու-  
թեան օրինաց հակառակ գոր-  
ծէ , զի բնութիւնը թէ արանց  
եւ թէ կանանց համար որոշ  
սահմաններ է դրած :

~~~~~

Անհաւասար ամուսնութիւնք ,  
այսինքն կլինը մեծ եւ այրը փոքր  
կամ այրն ձերացեալ եւ կինը  
դեռ ծաղկահասակ օրիորդ մը ,  
ստուգիւ թէ բարոյապէս եւ  
թէ Ֆիզիքականապէս ծանր եւ  
դառն պտուղներ կը բերէ :

~~~~~

Յիմար է այն ձերութեան մօ-  
տեցած մարդը եւ ծաղու ար-  
ժանի որ մանկամարդ օրիորդի  
մը հետ ամուսնանալոյ խոր-  
հուրդը մտքէն կանցնէ :

Այն օրիորդը որ ինքզինքը ծեր մարդու մը պաղ բազկացը կը յանձնէ, իւր փափուկ իգութիւնը կասկածանաց ենթակայ կընէ :



Գեոահասակ երիտասարդ մը տարիքը առած օրիորդի մը հետ կամ այրի կնոջ մը հետ ամուսնանայ խիստ վտանգաւոր հետեւանայ տեղի կուտայ :



Փափկասուն եւ նրբակազմ օրիորդ մը երբ ջղային եւ հսկայ երիտասարդի մը հետ միանայ, քիչ ատենէն ապրող դիակի մը կը փոխուի :



Եթէ ծաղկահասակ եւ փափուկ երիտասարդ մը զինքն կազմութեամբ եւ զօրութեամբ դերազանցող օրիորդի մը հետ ամուսնանայ շուտով ոսկերաց

պարկի մը կամ կմախքի մը պիտի փոխուի :



Ամուսնական կենաց մէջ երիտասարդն օրիորդէն քանի մը տարու մեծ լինելու է :



Օրիորդք ընդհանրապէս 20 տարեկան ըլլալով զարգացման կօտարելութեան ժամանած կը համարուին, ուստի սոյն միջոցին յարմար են ամուսնութեան :



Ամուսնութեան մէջ նկատուելիք առողջ կազմութեան նշաններն են քաջառողջ ստամոքս որ թէ խորթակի եւ թէ կերածը դիւրաւ մարսելու զօրութենէն կը ճանչցուի, առողջ ատամուք, որոնք նշան են առողջ ու զօրաւոր հիւթոց եւ միջոցք անհրաժեշտք ժարտ-

դու թեան, լաւ կազմակերպեալ կուրծք որ ընդարձակ եւ կորածեւ կըլլայ, դիւրին, խոր եւ հանդարտ շնչառութիւն որ կրնայ առանց դժուարութեան շունչը ժամանակ մը բռնել :



Ամուսնական կենաց մէջ շրտայլութիւն զեզխութիւն եւ անչափութիւն առն համար յանհունս առաւել վեասակար է քան թէ կնոջ համար :



Եթէ կայ աշխարհիս մէջ ամենաթշուառ ընկերութիւն մը այն ալ դժբաղդ ամուսնութիւնն է, զի չկայ ուրիշ բան մը որ այնքան իրարու հակառակ ըլլայ քան սէր եւ ատելութիւն :



Մարդիկ երկու բաներէ կը տանջուին, երեւակայութիւն

եւ բաղձանք են ասոնք, երկուքն ալ սիրոյ մէջ կը գտնուին ուստի ամուսնութեան յայնժամ ձեռնարկելու է երբ երեւակայութիւնը հանդարտ եւ բաղձանքը սիրոյ մէջ կը գտնուին :



Ամուսնական կեանքը կրնայ կամ թշուառ եւ կամ երջանիկ ըլլալ, երջանիկ ամուսնութեան մէջ երբ երկու ամուսնացելոց մէկը վեաս կրէ կամ մեռնի միւսին համար ա՛լ աշխարհիս մէջ ասկէ դառն ցաւ չկրնար ըլլալ :



Խոհուն այլը կրնայ բարուքել զվատ կինը, նոյնպէս ալ համեստ կինը զվատ այլը միայն թէ համբերութիւն, իմացողութիւն, ժամանակ եւ պատեհութիւն կարեւոր է մինչեւ որ



բնութիւնք զիրար լաւ մը ճանաչեն :



Ամուսնական կենաց մէջ նախանձն ժանտախտ մ'է , ասի բազում խաղաղ եւ անգորր ամուսնութիւնք տակն ու վրայ ըրած է , ասիկայ չափազանց սէրէ յառաջ կը դայ . կան նաեւ վատաբարոյ անձինք որ սոյն ուրոմը ամուսնացելոց մէջ կը սերմանեն , ուրեմն այս տեսակ սատանաներէ զգոյշ լինելու է .



Ամուսնութիւնը սիրոյ կապ մ'է եւ օրտին մէջ կը գոյանայ , ուստի ով որ ամուսնացած ատենը բաց ի սիրոյ դրամ , տուն , տեղ , ստացուացք կը պահանջէ նորա նպատակը ամուսնանալ չէ , եւ այնպիսին շատ տարակուսելի է որ ամուսնական կենաց մէջ երջանկութիւն վայելէ , զի ուր որ

դրուած հիմը ծուռ է անշուշտ չէնքն ալ ծուռ պիտի ըլլայ :



Այն երիտասարդն որ օրիորդէ մի իբր պայման դրամ , տուն եւ ստացուածք պահանջէ , գործնականապէս արտայայտէ որ ինքը օրիորդին հետ ամուսնանալ չը բաղձար , այլ նորա հարստութեանցը մասնակից կամ լաւ եւս տէր ըլլալ կուզէ . պժղալի՛ բաղձանք . անամօթ առաջարկութիւն :



Ի շնորհս դրամի եւ ստացուածոց ամուսնացող օրիորդը թող անտարակոյտ ըլլայ որ այրըն իր վրայ ոչ թէ իբր կողակից եւ ընկեր եւ ամուսին , իր մարմնոյն կէսը համարելով զայն ինչպէս որ պարտ է ըստ այնմ պիտի վարուի նորա հետ , այլ բազում անգամ իբր տաղտ-

կալի արդեւք մը ի՛ր հարստու-  
թիւնը լիովին յանձին սեփհա-  
կանելու, ուստի այրն իր չար  
նպատակին հասնելու համար  
վատ միջոցներու պիտի դիմէ,  
եւ արդէն իսկ լրագիրք յաճախ  
կը հաղորդեն մեզ սարսափելի  
պատմութիւնք ոճրագործութեանց  
եւ եղեռանց որ այրն իւր  
կնոջը, եւ կիսն իւր առն դէմ  
գործած է որոնք պէտք է խը-  
րատ բլան անփորձ օրիորդաց  
եւ երիտասարդաց:

~~~~~

Մեր ազգին մէջ այս տեսակ  
ամուսնական դրժմութիւնք  
դեռ թեթեւ են, որովհետեւ  
այս սովորութիւնք նոր է եւ չէ  
ծաւալեալ. սակայն ստոյգ է  
որ որքան ընդհանրանայ այն-  
քան դառն պտուղներ յառաջ  
պիտի բերէ:

~~~~~

Կան պահանջմունք որ իրա-

ւացի են ամուսնական կենաց  
մէջ, եւ առանց անոնց հնար  
չէ երջանիկ ըլլալ նոյն կենաց  
մէջ, որոնց մէկ քանին յիշե-  
ցինք:

~~~~~

Օրի՛որդ, յու պապդ այ ամուսնինէդ պահանջէ սէր, համեստութիւն, բարեխառնութիւն, աշխատասիրութիւն, իր-  
նայողութիւն, չափաւորութիւն  
եւ մանաւանդ քաղցրաբարո-  
յութիւն որ հիմ է ամենայն  
ընտանեկան եւ ընկերական եր-  
ջանկութեանց: Թող նա չըլ-  
լայ արբեցող, խաղամու, փա-  
ռասէր, ծոյլ, ընչասէր, շատա-  
խօս, եւ կուտասէր: Յայնժամ  
դու ամուսնական սուրբ տա-  
ճարին հիմունքն լաւ պատրաս-  
տած լինելով վտան լեր անոր  
մէջ երջանիկ ըլլալու:

~~~~~

Երիտասարդ, նայէ՛ որ ա-

պագայ ամուսինդ ունենայ սըր-  
տանց սէր առ քեզ , եւ ըլլայ  
ժիր , գործունեայ , պարզասէր ,  
քաղցրաբարոյ , հնազանդ , մաք-  
րասէր , խնայող , վերջապէս ա-  
մենայնիւ հմուտ ընտանեկան  
գործոց . երանի՛ քեզ եթէ  
այսպիսի ամուսին մը գտնաս :  
Երջանկութեան աղբիւր է նա .  
յայնժամ քու կենացդ պէսյարգէ  
զայն զի արժանի է յարգանաց :  
Այսպիսի ամուսիններէ բաղ-  
կացեալ ընտանիք մի ջուրերու-  
քով տնկուած ծառի մը կը նը-  
մանի որ միշտ կանանչ կմնայ ,  
կը ծաղկի ընդ միշտ եւ լաւ  
պտուղ կը բերէ :



### ԱՌՈՂՋԱԿԱՆ

Երբ արեգակը մարը կը մըտ-  
նէ ու խաւարն աշխարհն ծած-  
կէ , բնութիւնն կը հրաւիրէ  
բոյսերն , կենդանիք ու մարդիկ

աշխարհի արտաքին աղդեցու-  
թիւններէն հրաժարիլ :



Ասով բնութիւնը նաեւ օ-  
րէնք մը դրած կըլլայ թէ քը-  
նոյ նուիրեալ եւ որոշեալ ա-  
տեն միայն գիշերն է , ուստի  
ով որ այս բնական օրէնքը եղ-  
ծէ կը պատժուի , ջղային հի-  
ւանդութեամբ , յօդուած ոցցա-  
ւով եւ աչքի տկարութեամբ :

Առողջութեան դանձր անըս-  
պառ պահել ուղղոն պարտի  
կանուխ պառկիլ եւ կանուխ  
եհնել անկողնէն :



Կէս գիշերէն յառաջ երկու  
ժամուան քունը մարմինն ա-  
ռաւել կը զօրացնէ եւ կազդու-  
րէ քան թէ ցերեկուան 8 ժամ-  
ուան քունը :





Սրեւին ծագմանը հետ պէտք է անկողինը ձգել , մինչեւ անգամ եթէ ամբողջ գիշերը լոկ 2 ժամ քնացած չըլլայ : մէկը պարտի այսպէս ընել ի պահպանութիւն իւր կենաց :

~~~~~

Երկար կեանք ունեցողք ամենքն ալ կանուխ կելլէին : Ախայէյ, Մեթօտիսթիւերուն պարագլուխը , կանուխ ելնելն իրեն հետեւողներուն կրօնական պարտք մ'էր դրած :

« կանուխ պառկելն ու կանուխ ելնելը մարդս առողջ , խելացի եւ հարուստ կընէ » կըսէր Նէւգոն Փիլիսոփայն :

~~~~~

Արթննալէ ետք անկողնոյ մէջ մէկ կողմէն ի միւսն դառնալով ոչ մրտիել ջանալու եւ ոչ ալ երեւակայութիւնը դանազան խորհուրդներով նեղե-

լու է , այլ պէտք է անմիջապէս անկողնէն ելնել :

~~~~~

Քնոյ սենեակն մութ եւ լրուիկ ըլլալու է , օդը թարմ եւ մաքուր , ցերեկ ատեն հոն նըստելու չէ եւ կրակ ալ պէտք չէ վառել հոն :

~~~~~

Անկողին երթալէ յառաջ քիչ ուտելու է : Երեկոյեան ընթրիքը գոնէ քնանալ երթալէն 2 ժամ յառաջ աւարտեալ լինելու է :

~~~~~

Քնացող մարմինը հորիզոնական զիրք պէտք է ունենայ , բարձր բարձր արեան շրջանը եւ շնչառութիւնը կարգելու , եւ ուստի կուրծքի հիւանդութիւնք պատճառին :

~~~~~

Քնանալէ անմիջապէս յառաջ  
օրուան ամեն խորհուրդներն,  
հոգերն ու մտածութիւնք մտ-  
նալու է: Անկողնոյ մէջ կար-  
գալը խիստ վնասակար է, սա  
վրդովիչ երագներու պատճառ  
կըլլայ որով քնացողն թուրու-  
թեամբ եւ գլխի ցաւով կը  
զարթնու:



Անկողնը ոչ խիստ փափուկ  
ոչ ալ խիստ տաք ըլլալու է,  
քնացողին գլուխը բաց պէտք  
է լինիլ, վիզը եւ բազուկները  
հնար եղածին չափ վերմակէն  
դուրս եւ ոտքերն տաք պէտք  
է պահուին, եւ ասոր համար  
միշտ վերմակին տակ պահելու  
է. գիշերուան հանդերձք թե-  
թեւ եւ թոյլ ըլլալու են.




Շատերն կը գանդատին թէ գի-  
շերներն չեն կրնար քնանալ եւ

ուստի գիշերներն անքուն անցը-  
նելով այլ գործքով կը զբաղին:  
Ասոնք եթէ ութ օր շարունակ  
խիստ կանուխ ելնեն շուտով պի-  
տի տեսնեն որ առանց որ եւ է  
գեղի հանգիստ պիտի ննջեն:



Թէ երկարատեւ թէ կարճա-  
տեւ եւ թէ անպատեհ ու ան-  
բաւական քունը առողջութիւ-  
նը կը վնասեն եւ կեանքը կը  
կարճեցնեն:



### ՍՆՈՒՆԴ

Մննդեան կամ կերակրոյ նը-  
կատմամբ ալ քսնի մի գիտե-  
լիք կայ որ ամեն մարդու անհը-  
րաժեշտ է գիտնալ: Ուստի կը  
փութամք հոս համառօտիւ բո-  
վանդակել.

Պէտք է միշտ կանոնաւոր  
ճաշել. ասի խիստ լաւ եւ ա-  
ռողջութեան նպաստաւոր սո-

վորութիւն մ'է :

Եթէ չափազանց յողնեցուցիչ աշխատութիւն մ'ունիս, առ նուազն օրը երեք անգամ ճաշելու ես :

ուսու

Հացը սննդեան էն զլիաւոր մասն լինելով պէտք է լաւագոյն տեսակ ըլլալ :

ուսու

Աշխատողին համար միտն ամենէն լաւ կերակուրն է, սակայն պէտք չէ միշտ պարարտ տեսակէն ուտել :

ուսու

Լաւագոյն տեսակ միսերն են հորթի ոչխարի եւ կովի միսը, քաջառողջ մտրդկանց համար, իսկ առողջութիւնը նոր գրտած կամ տկարակազմ մարդոց համար ձուկն, հաւի, ճագարի, հորթի եւ վառեկի մի-

սը նախապատիւ համարելի են :

ուսու

Արդանակը դիւրամարս եւ աննդարար կերակուր մ'ըլլալով արժան է առատութեամբ գործածել :

ուսու

Պտուղներն երբ կատարելապէս հասունեցած են, երբէք վնասակար չեն. ատոնցմէ մասնք ինչպէս խաղողը, կեռասը, սալորը եւ այլք օգլիքներն մաքրելոյ կը ծառայեն :

ուսու

Համամներն այսինքն սղպեղըն, կինամանը, աղը, եւ մեխակն երբ չափազանցութեամբ կերակրոյ մէջ դրուին վնասակար են :

ուսու

Քացախը իւր կիղիչ յատկու-



Թեամբը կրնայ ստամոքսը մշա-  
սել եթէ չափազանց դործած-  
ուի կերակրոյ մէջ :

Քացախը երբէք խմելու չէ ,  
ինչպէս որ ոմանք այս սովո-  
րութիւնը ունին :



### ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ

Հիւանդութիւն ըսուած բա-  
նը չէ այլ ինչ՝ բայց եթէ մարմ-  
նոյն երբին դործարանաց ան-  
կարգութիւնն :



Մարմնային ո՛ր եւ իցէ ան-  
հանդստութիւն զգացած ատեն  
իսկոյն աշխատելէ դադրէ եւ  
ուտելեաց ու ըմպելեաց մասին  
ալ մեծ զգուշութիւն ըրէ :



Հիւանդութեան սկզբնաւո-  
րութեան ատեն երբէք անմի-  
ջապէս զօրաւոր դեղեր մ'առ-  
ներ , քանզի կրնայ վտանգա-  
ւոր լինիլ :

Ամեն հիւանդութիւն մաս-  
նաւոր պատճառէ մը կը հետե-  
ւի , ուստի պէտք է զայն պատ-  
ճառ գիտնալ ըստ այնմ դար-  
մանելոյ զհիւանդութիւնն : Ա-  
սոր համար երբ բժշկի երթաս  
փութա նախ պատմել նմա ինչ  
որ գիտես հիւանդութեանդ յա-  
ռաջ գալուն նկատմամբ :



Ամենաթեթեւ հարրուխներն  
իսկ պէտք չէ ուշադրութենէ  
զանց առնել , քանզի ասոնցմէ  
յաճախ որտի՛ցաւ կամ ինչ եւ  
իցէ թոքային ախտ մը յառաջ  
կրնայ գալ :



Սրտի ցաւն եւ կողացաւը  
րնդհանրապէս սաստիկ պաղ  
ջուր խմելէ , պաղպաղակ ու-  
տելէ եւ ինքոյնքը պաղեցնե-  
լէն յառաջ կը գայ :



Ստամբուսի բորբոքումը միշտ  
ողելից ըմպելիք եւ խիստ  
պաղ կամ խիստ տաք խմելիք-  
ներ գործածելէ կը պատճառի :

~~~~~

Անմարտոյութիւնը կամ կե-  
րակութիւնը կամ չափազանց  
կերութեամբ եւ կամ ստամոք-  
սի տկարութենէ պատճառի .  
ատոր դարմանը պարզ է , պէտք  
է իսկոյն ուտելն ու խմելն դադ-  
րեցնել եւ քանի մը դաւաթ  
թէյ կամ անանուխով բազադ-  
րեալ օշարակ խմել :

~~~~~

Հիւանդութեան ատեն պէտք  
է քաջասիրտ եւ հանդարտ լի-  
նիլ , զի հիւանդութեան շու-  
տով բժշկուելուն համար քա-  
ջասրտութիւն եւ հանդարտու-  
թիւն խիստ կարեւոր է :

~~~~~

Առողջութիւնն ու ժամանա-

կը հարստութեանց թանկագի-  
նըն է :

~~~~~

Առողջութիւնը անգին գանձ  
մ'է առանց որոյ ամենէն մեծ  
հարստութեանց մէջ ալ կեան-  
քը զգուելի եւ ծանր բեռ մ'է-  
ուստի ո՛վ դուք որ առողջու-  
թիւն ունիք , ո՛վ դուք , որոնց  
Սրարիչն Աստուած այս թան-  
կագին գանձը եւ հարստու-  
թեանց հարստութիւնը պար-  
զեւած է , լաւ գիտցէք նորա  
յարգը եւ վայելեցէ՛ք զայն ա-  
մենայնիւ :

~~~~~

Զեղխութեամբ կեանքը շու-  
տով կը մաշի եւ առողջութիւ-  
նը իսպառ խանգարուի :

~~~~~

Առողջութիւնը խանգարուի  
նաեւ ամեն տեսակ մոլութիւն-  
ներով պէտք եղած սնուն-

դը չառնելով, ուտելեաց եւ  
խմելեաց մասին որկրամոլ լի-  
նելով ինքզինքին հոգ չաանե-  
լով :



Առողջութիւնդ պահելու հա-  
մար չափաւոր աշխատէ .

Առած սնունդներդ ըստ ա-  
խորժի ըլլայ եւ չափաւոր :

Զուարճութիւններն չափա-  
ւոր կերպով կատարէ :

Հին առած մի այսպէս կըսէ,  
Քաջառողջ ըլլալու համար  
պէտք է ըստ ախորժակի ու-  
տել, խմել եւ զուարճանալ :



Շատերն այնպէս կը կարծեն  
թէ մարմնոյ մաքրութիւնը ա-  
ռողջութեան կարեւոր բան մը  
չէ, զայս ըսողներն մեծապէս  
կը սխալին եւ չեն գիտիր այն  
մեծ ու կարեւոր պաշտօնը որ  
մորթը կատարէ . մարմնոյ մոր-

թը խիստ փոքր ու աննշմարե-  
լի ծակտիքներ կը պարունակէ  
որոնցմէ մարմնոյ ներքին աղ-  
տերն դուրս ելնեն, արդ եթէ  
դուրս ելած աղտերն մորթին  
վրայէն չմաքրուին, այն ծակ-  
տիքներն բնականաբար կը գոց-  
ուին, որով մարմնոյ նոյն գոր-  
ծողութիւնը կամ պարզն ըսե-  
լով շնչառութիւնը տեղի չու-  
նենար ի վնաս առողջութեան .  
Ուրեմն մաքրութիւնը առող-  
ջութեան խիստ կարեւոր եւ  
նպաստաւոր է եւ այս մասին  
մեծ զգուշութիւն ընել հարկ է :



Մաքրութեան պահպանու-  
թեան համար տաք ջրոյ բաղ-  
նիքներն ամենէն լաւ միջոցներ  
են եւ պէտք է յաճախ յաճախ  
երթալ հոն :



Ամառն ծովի բաղնիք մտնե-  
լն ալ խիստ օգտակար է ու



բոնք զովացուցիչ եւ զօրացուցիչ ըլլալով առողջարար են . սակայն յաճախ մտնելու չէ , այլ շաբաթն մէկ երկու անգամ բաւէ . նաեւ պէտք է հրմուտ բժշկի մը այս մասին խորհուրդ հարցնել :



Աշխարհիս վերայ ամեն բան օկիզք մը ու վախճան մ'ունի , ասանկ ալ մարդս ինչպէս որ ունի իւր մանկութիւնն որ իւր կենաց սկիզբն է , ունի նաեւ ծերութիւնն որ իւր կենաց վախճանն է , ծերութիւնը մարմնոյ գործարաններն տկարացրնելով կերեւի , այն ատեն է որ մարդս կիմանայ ընտանիք ունենալուն բարեբաղդութիւնը , եւ տղայքներ ու աղջիկներ ունենալու քաղցրութիւնը :



Սողոմոն իմաստունը շատ գեղեցիկ կը նկարագրէ ծերու-

թիւնը թէ եւ այլաբանօրէն (Տես Գիրք ժողովոյի ի Սուրբ Գիրս վերջի ժԲ. բդ Գլուխը) մարդոյս այս հասակին մէջ ալ իւր զօրութիւններն կը տկարանան եւ մարմնոյ գործարանն ինչպէս աղիքներն ու ստամոքսըն իրենց պաշտօնն ալ չեք կրնար ըստ կանոնի կատարել , արդ անկարգութիւնը որ ամեն հասակի համար ալ վտանգաւոր է ծերութեան համար առաւել եւս է , ուստի ծերերըն եթէ կուզեն իրենց վերջին օրերը խաղաղութեամբ յ'առողջութեան անցնել պէտք է որ ամենայնիւ անկարգութիւններէ խոյս տան եւ ամենայն կերպով բարեկարգ ապրին :



Յօդացաւութիւնը , կաթուած եւ անդամալուծութիւն ծերութեան ամենէն սովորական ճիւղացութիւններն են

ուստի մեր պատկառելի ծեր  
ընթերցողներն պարտին զգոյշ  
ըլլալ պատճառ տալէ :



Գիտնալ պէտք է որ ծերու-  
թեան մէջ կուրծքի ցաւերն ,  
կողացաւութիւնք եւ բազում  
այլ հիւանդութիւնք միշտ ծան-  
րաբոյժ են ուրեմն մեծ ուշադ-  
րութիւն ընելու է անոնց :



Կանանց համար ալեւորու-  
թիւնը առ հասարակ կարծուա-  
ծին չափ վտանգաւոր չէ , բայց  
այն վայրկենին յորում կըսկսին  
անկանոն կենօք ապրիլ , ան-  
տարակոյս առողջութիւննին կը  
վատթարանայ :



Կինն եւս պարտի զգուշու-  
թեամբ մարմնոյ կազմութեան  
պահանջմանն համեմատ իւր  
պարտաւորութիւններն կատա-

րել չափաւոր կերպով , զի  
անչափաւորութիւնը թէ ու-  
տելեաց թէ ըմպելեաց եւ թէ  
քնանալոյ մասին մարդոյս իւր  
ամեն հասակին մէջ խիստ վը-  
տանգաւոր է եւ մնասակար  
առողջութեան :



Ձեզիս եւ շոայլ ապրելն կեան-  
քը ապառովջ , կարճ , եւ ծե-  
րութիւնն ալ զգուելի կընէ :



Կանայք երբէք անջուր գինի  
եւ ջերմացուցիչ ըմպելիքներ  
գործածելու չեն , կերակրոյ  
մասին ալ միշտ անոյշ տեսակ-  
ներն կանանց համար նախա-  
պատիւ համարելի են որոնք  
նաեւ զիրցյունն զանոնք :



Օրլորդք երբէք թոսե կոչ-  
ուած մէջքը սեղմող գօտին  
գործածելու չեն եթէ կուզեն

քաջառողջ ըլլալ եւ երկար ապ-  
րիւ :



Բժիշկներն կաշխատին պա-  
տահած հիւանդութիւններն ջըն-  
ջել, սակայն մեզմէ իւրաքան-  
չիւր ոք հոգ տանելու է հի-  
ւանդութեան պատահումը ար-  
գիլել, ասոր մէկ պարզ միջոցն  
է անդարար կերակուր, մա-  
քուր ջուր եւ առողջարար օդ :



### ՎԵՐՋԻՆ ԽՐԱՏ

Երբ մարմնոյդ անդամներուն  
մէջ թոյլութիւն, երեսից վը-  
րայ տաքութիւն, եւ ախորժա-  
կի նուազութիւն զգաս, իսկոյն  
հմուտ բժշկի մը դիմէ, այսպէս  
պատահելիք հիւանդութեան  
առջեւը շուտով կառնես :



### ԲԺՇԿԱԿԱՆ

ԵՐԿԱԹԻ ՓՍՈՐՆԵՐՆ

ԱՁՔԷՆ ՀԱՆԵԼ

ՔՕԼԻՌ (Collyre) ՍՊԵՂԱՆԻ  
ԱՁԱՅ

Iode . . . . 5 centigram  
Iodure de potassium 60 „ „  
Nssenes de Roses 100 gram „  
այս դեղն աչքին վերայ դնելէն  
քիչ մը յետոյ երկաթի փսորն  
կանսի ժանգոտիլ եւ իր փայ-  
լունութիւնը կանհետի, այն ա-  
տեն աչքը կաթով լվալու է եւ  
յետոյ պաղ ջրոյ մէջ լաթ մը  
թրջելով քիչ մ'ատեն աչքին  
վրայ ծածկելու է :



Ծաղիկ հիւանդութեան ա-  
տեն շատերն չկրնալով համբե-  
րել կը քերեն վերքերն որով  
բոլոր կենաց մէջ աւրուած  
երես կռնենան, հոս երկու մի-



Չոց յառաջ կը բերինք զայս արգիլելու համար, Ա՛ռ երեք մաս ձէթ ու հետն մաս մը ճերմակ մեղրամոմ խառնելով դիր կըրակին վերայ որ հալին եւ տաք տաք փափուկ վրձինով մը երեսիդ ու վզիդ քսէ, ասի չորնալով օղը կարտաքսէ եւ քերուիլն կարգիլէ :

Ուրիշ միջոց մ'է կտոր մը խողի աղած միս առնել կաշիովըն մէկտեղ եւ եռացնել ջրոյ մէջ, երբ քիչ մը պաղի դանակով բարակ կարէ եւ ամեն քերուած տեղերն երեք չորս անգամ քսէ :



Այրածի դեղ. Յորենի ալիւրն դիւրագիւտ եւ միշտ յաջողելի միջոց մ'է այրածի համար. ասի ջրով շաղուելով այրածին վրայ դիր, եթէ չորնալը վա վէրքը եւ նորէն դիր :



Ստամոքսի անզօրութեան դէմ ասեն առաւօտ 10-12 հատ պըղպեղ կըլլէ դեռ նախաճաշ չըրած :



Վէրքերն փտտելէ պահելոյ համար անոնց վրայ շաքար ցանէ. Թուրքերն նոր վէրքերն տինւով կը լվան եւ վրան շաքար կը ցանեն. խիստ շարաւալից վէրքերն կը բուժին եթէ կաղնիի տերեւներուն մէջը շաքար դնելով եփուի եւ վէրքը անով լուացվի :



Մանկան մը աղիքներուն մէջ որդըլլալուն նշաններն հեռեւեալներն են. երեսի դունատութիւն, մարած աչքեր, մշտատեւ քերումն քթի, լեզուի աղատութիւն, դարչահոտ շնչառութիւն, արիւնահոսութիւն քթի, ախորժակի նուաղութիւն, շատակերութիւն, միշտ քնա-

նալու փափաք , անհանդիստ  
քուն , քնացած ատեն ակրայի  
կճրտուք , վերջապէս մարմնոյ  
ընդհանուր ծիւրութիւն :



Դարման . — Նախ պէտք է  
զիտնալ որ վերոյիշեալ նշան-  
ներն ամենքն ի միասին չեն ե-  
րեւիր որդ ունեցող մանկան վը-  
րայ . ուստի երբ տղայ մը հի-  
ւանդ է եւ այս նշաններէն մին  
վրան տեսնուի պէտք է իսկոյն  
որդնաթափ դեղ մը տալ նմա .  
Սթեր բոյսին ( գաղ . բասին արժ  
վ սէրբիան ) արմատը խիստ ազ-  
դու եւ յաջողելի դեղ մ'է , այս  
դեղն միանդամայն իւր աղդե-  
ցութիւնը կը գործէ թէ որդանց  
վրայ եւ թէ ջղային ախտանշա-  
նաց վրայ որք ընդհանրապէս  
որդերուն հետ ընկերանան : Այս  
բոյսին արմատը օշարակ մը ձե-  
ւացընելով խմցուր :



Յաճախ ուրիշ դեղ մ'ալ կը  
գործածուի որ առաջինէն նուազ  
արդիւնաւոր չէ . քիչ մը կաթի  
մէջ մէկ երկու պճեղ սխտոր դը-  
նելով կեռայնեն եւ տղոց կը  
խմցնեն , ասի թէ եւ դեղջկական  
դեղ մ'է սակայն խիստ յաջողե-  
լի է :



Ուրիշ դեղ մ'ալ կը գործած-  
ուի գուրսէն . որ երբեմն ներ-  
քին դեղերէն աւելի յաջողելի  
է , առ չ չափ օշինտոր , ( փե-  
լին օթու ) 5 պճեղ սխտոր եւ  
մէկ չափ կաթի մէջ եփելով տած  
( լափայ ) մը շինէ եւ մանկան  
պորտին վրայ դիր :



Նասրրի դարման . նախ եւ  
յառաջ կոշիկները ոտքերը նե-  
ղելու չափ սեղմելու չեն . նա-  
սրրի նշաններ երեւնալուն պէս  
ոտքերն տաք ջրոց մէջ դնելու

է, եւ նասըրին վրայի մասը կըտ-  
րելէն զկնի տաշած աճառ կամ  
սոխի կտոր մը վրան դիր, Հին-  
ցած նասըրներու վրայ diachy-  
lon composit գիր, մեծ հանգըս-  
տութիւն պատճառէ նասըր ու-  
նեցողաց եթէ միշտ մոմի իւղով  
կամ խոզի իւղով օծեալ լաթ մը  
գնեն վրան որով նասըրն միշտ  
կակուղ կը մնայ :



Տարափոխիկ հիւանդութեամբ  
օդն ապականեալ տեղ մը դա-  
ցած ատենդ փայտի ածուխի  
փոշին առ եւ քսակի մը մէջ լե-  
ցընելով բերնիդ վրայ կապէ,  
այս կերպով շնջած օդդ ածխոյ  
փոշիէն անցնելով կը մաքրուի  
եւ վնաս չտար :



Տան մէջ եւ կամ այլ ուր ե-  
թէ գարշահոտ տեղերն միշտ ա-  
նօթով մը կիր դրուին (չմարած)

գարշահոտութիւնը միւս կողմե-  
րն տարածուելէ կարգիլուի :



Սյրածի դարման. վէրքին վը-  
րայ ափիոնի ոգիի մէջ աղէկ մը  
թրջած աղ դիր, աօի քանի մի  
ժամ վէրքին վրայ մնալով այր-  
ման ցաւը կը դադրի բոլորովին  
եւ վէրքն ալ շուտով կը բժըշ-  
կուի :



Գինովութեան դարման. Հու-  
նիւնստ Գերմանացի նշանաւոր  
բժիշկը եւսթրէ շմեւը սեպ-  
ֆելէ հետ խառնելով գինովու-  
թեան իբր դեղ կը տար :



Տօքթէօն վալանթի սա դե-  
ղը գործածած եւ յաջողած է. մէկ  
մաս լեյնլեյն-ա-րօֆեո-ս եւ ու-  
թը մաս լեյնլեյն-ա-րօֆեոլիտ-ա-րօֆեո-  
այս բաղադրութեանէն 60-80 կտ-



Թիլ ըստ աստիճանի գինուօւ-  
 թեան, օդիի մէջ դնելով ժամը  
 անգամ մը գինովին տալու է .  
 ասի թէ եւ գիւրին եւ յաջողելի  
 դարման մ'է բայց գործը լ'ըն-  
 ցուցած գինով մը պիտի չկրնայ  
 սթափիլ ի թմրութեանէ միայն թէ  
 շատ օքիո՞ճ առնելով, որ օչա-  
 բակին անախորժութիւն մը եւ  
 մանաւանդ մարսելու դժուա-  
 րութիւն չտայ :



Աւէիաի որ'ածնեա՛ կոչուած  
 քիմիականիւթը գինուօւթեան  
 ամենէն լաւ դարմանն է մինչեւ  
 նոր դարմանի մը գտնուիլն :  
 eau sucrée 150 gram (45) onces  
 acetate d'ammoniaque 12-15  
 centigram (30 gram) դեղարա-  
 նի մը մէջ պատրաստել տուր .  
 առանց վախու այս դեղին քա-  
 ոորդը, կէսը եւ մինչեւ իսկ ի  
 հարկին՝ ա՛մբողջը կրնայ տրուիլ  
 գինովներուն :

Այս դարմաններն ցուցնելէ  
 ետեւ կուզենք մեր ընթելիցո-  
 ղաց յառաջ բերել բարեխառ-  
 նութեան ոսկեղէն կանոնը որ  
 առողջութեան գաղտնիքն է .  
 անտարակոյս ամեն մարդ խա-  
 ղողին հիւթը պէտք է վայելէ  
 չափաւոր կերպով ինչպէս որ  
 պարտ է վայելել այն բոլոր պար-  
 գեւներն որ տիեզերաց Աբարի-  
 չը կը շնորհէ մեզ . բայց պարտ  
 է նաեւ որ ամեն մարդ զգոյշ  
 լինի բոլոր այն տեսակ վար-  
 մունքներէն եւ սովորութիւն-  
 ներէն որք իւր արժանիքը կը  
 նուազեցնեն, իւր հոգւոյ եւ  
 մտային ազնիւ կարողութիւն-  
 ներն կը խանգարեն եւ նորա ա-  
 պագայ կենաց համար խել մը  
 թշուառութիւնք պատրաստեն :



Փոփոխական հիւանդութեան  
 տէր անձինքներէ զգոյշ լինելու  
 է, անոնց մօտ երթալու չէ ո՛չ

ալ դպչելու է, եթէ իբր պաշ-  
տօն եւ պարտաւորութիւն հր-  
նար չէ այսպէս բնել, հող չէ,  
վասն չկայ, եւ պէտք չէ խոր-  
հիլ թէ կը փոխուի, միայն թէ  
հիւանդին սենեակը բան մ'ու-  
տել եւ խմելու չէ. նաեւ անօ-  
թի եղած ատեն պէտք չէ հի-  
ւանդին սենեակին երթալ. ներ-  
քին հանդերձներն հնար եղա-  
ծին չափ փոխելու է, մարմինը  
մաքուր պահելու է, հիւանդին  
սենեակէն դուրս ելած ատեն  
պէտք է լվացուիլ եւ մաքուր օգ-  
տանել. մուշտակի նման հան-  
դերձներ պէտք չէ հաղնիլ որ  
փոփոխական նիւթ կկրեն: Ըզ-  
գոյշ լեր պազ օտանել, կիրք  
ելլելէ, բուռն աշխատանքէ եւ  
հիւթոց կորուստէ, քաջ լեր,  
ուրախ եւ զուարթ, փոփոխա-  
կան նիւթ մը շոշափելէ ետք  
անմիջապէս աճաւոր, քացախով  
կամ ջրոյ մէջ քիչ մը աւել

խառնելով լվացուէ: Եթէ հի-  
ւանդին շունչն քեղի անցաւ,  
բերանը յաճախ քացախով կամ  
քօմով իսկ աչքերդ ու քթիդ  
ծակերն ալ պարզ ջուրով լվա,  
թուրդ դուրս տուր, հիւան-  
դին սենեակը Քի-Նի-տուր եւ  
փրադ օրը Գլուց ցանէ: Խիստ  
օգտակար է Գլուց-ը որ շօ 1  
մաս եւ ջուր 40 մաս մէկ պնա-  
կի մէջ լեցնելով հիւանդին սեն-  
եակը դնելն որով օդին ազտե-  
ղութիւնը միշտ կը մաքուրի:



**ՍԱՌԱԾՆԵՐՈՒ ԴԱՐՄԱՆ**

Ասոնք զգուշութեամբ փո-  
խադրուելու են զի դիւրաբեկ  
են, անմիջական ջերմութիւնը  
զանոնք կը մեռցնէ, ընդհակա-  
ռակն սառածը պազ տեղ մը մեր-  
կացնելով ձեան մէջ ծածկելու  
է, ձիւն չեղած ատեն պաղ ջր-



րոյ մէջ թաթախեալ լաթերով  
 փաթաթելու է եւ կամ պաղ ջը-  
 րով լի մեծ ամանի մը մէջ դը-  
 նելու բերանն եւ քիթը ա-  
 զատ թողլով, յետոյ անկողնոյ  
 մը վրայ տաքածելով զայն՝ մար-  
 մինը պաղ ջրով շփէ կամաց  
 կամաց ջրին վրայ ուժ աւելցը-  
 նելով. երբ կենդանութեան  
 նշաններ տեսնուիլ սկսին, սըր-  
 տին բաղխիւնը զգացուի, յայն-  
 ժամ չոր կերպով շփելու է.  
 երբ շնչառութիւնն յառաջ եր-  
 թայ քիթին գրգռիչ եւ հոտաւէտ  
 նիւթեր հաղորդելու է, պէտք  
 է կամաց կամաց թոքերուն  
 շունչ տալ, գլխուն գազաթը  
 պաղ ջուր սրսկել եւ քացախով  
 գրէխ ընել. բազլիերակն ու շըն-  
 չառութիւնն շտկուելուն պէս  
 սենեակը հետզհետէ ջերմացը-  
 նելով տաք գինիով ալ մարմինը  
 շփելու է մեղմիւ եւ թէյ տալով  
 քրտնցնել ջանալու է :

Սրտի բախիւն ունեցողներու,  
 անզգայութեան, թմբուութեան  
 եւ արիւն թքնելու ենթակայ  
 եղողներու համար պաղ ջրով  
 լվացմունքներն շատ օգտակար  
 են :



Գիշերային քրտինքի դէմ ա-  
 ռատ պաղ սոս չայի խմէ, կամ  
 20-30 կաթիլ լեւեռեօլե ելեւէր  
 քիչ մը շաքարախառն ջրով խը-  
 մէ :



### ԽԵՂ ԴԱՄԱՀ

Մարդս կրնայ ջրով, անու-  
 խի կազով կամ կախուելով  
 խեղդամահ լինել :



Ինչ կերպով ալ որ մարդ մը  
 խղղուած ըլլայ առաջի գոր-  
 ծերնիս ըլլալու է զայն ջու-  
 րէն, կազէն, կախաղանէն



կամ վեղը ճնշող նիւթէն ազա-  
տել :



Չրոյ մէջ խեղդող ողին գլու-  
խը բարձր դիրքի մէջ պահե-  
լով պառկեցնել է ետք վրձինով  
մարմինն շփելու եւ կամ զա-  
նիկայ տաք անկողնոյ կամ  
տաք ջրոյ պահէօք եւ կամ տաք  
աւազի մէջ դնելով մարմինն  
Չերմացնել աշխատելու է , խեղ-  
դուածին փխտել տալն ալ օգ-  
տակար է այն միջոցին որ շունչ  
առնել տալու պատճառ կըր-  
նայ ըլլալ . ասի կրնաս մատդ  
բերանը խօթելով ընել :



Խեղդամահին քիթը գոցելու  
եւ մէկն իր բերանը անոր բեր-  
նին հաղորդելով նախ պէտք է  
ներսի շունչը դուրս քաշել ,  
եւ յետոյ թոքերուն շունչ տալ :  
Երբ կուրծքը բարձրանալ սկսի

վերէն դէպ ի վար շփելու է  
դայն . ստամոքսին վրայ ալ ճըն-  
շելու է եւ այսպէս արուեստա-  
կան կերպերով շնչառութիւնը  
նել տալու է . ասկից զատ փորը,  
կռնակն , ձեռքերն եւ ոտքերն  
անընդհատ շփելու է , որպէս զի  
արեան շրջանն զօրանայ եւ հո-  
տաւեա նիւթեր ինչպէս Սալմ-  
եաքի ոգի քթին բռնելու է :



Պէտք է նաեւ մարմինն գրը-  
դըռել շարժելով եւ մշտելով ,  
մարթը ցաւցնելով , եւ վրան  
վառած կնքամոմ կաթեցնելով,  
եւ աչաց ճիշդ գիմացը ճրագ  
վառելով . նաեւ քացախով ջը-  
րով , ոօմով կամ կաթիլ մի քը-  
րօթօնի իւղով ալ գրեխ ընե-  
լու է :

Այս պարագային եթէ խղճը-  
ւողին բերնին գիմացը բռնը-  
ւած հայելւոյն վրայ շնչառու-

Թեան նշան երեւի, աչաց րի-  
բերն ճրագին լոյսէն պզտիկ-  
նան, շփուած տեղերն կարմը-  
րին ու տաքնան, կենդանու-  
թեան նշան է:



### ԿԱԹՈՒՍԾ

Կաթուածահարին հանդերձ-  
ներն իսկոյն թուլցընելու եւ  
արիւն առնել տալու է. եթէ  
արիւն առնող մը գտնելն  
անկարելի լինի պէտք է ծուն-  
կերուն վրայէն սրունքնե-  
րըն լաւ մը կապել որ արիւնը  
երակաց մէջ չհոսի, մի եւ նոյն  
առնն գլխուն վրայ պաղ ջուր  
սրսկելու է, եւ քացախի մէջ  
աղ խառնելով գրէխ ընելու է,  
նաեւ մանանեխէ տած (հարտա-  
լի լափա մը) դնելու է սրունք-  
ներուն վրայ եւ ոտքերն ալ  
տաք քացախի մէջ թաթխուած

Ֆանէլայի մէջ փաթտելու է:  
Կաթիլ մը Քրոթոնի իւղ (Oleum  
Crotonis) ջրոյ մէջ խառնելով  
գրէխ ընելն կամ նոյն իւղէն  
կաթիլ մի շաքար-ջրով կաթ-  
ուածահարելոյն խմցնելն եւ  
կամ լոկ նոյն նիւթէն նոցա  
լեղուն քսելն անմիջական դար-  
ման կրնայ ըլլալ այս հիւան-  
դո թեան:



Գարշահոտ շնչոյ դարման Առ  
Սօդայի քլօրայտ, (Քլօրէ-ը րը  
Սօր) եւ գաւաթ մը ջրոյ մէջ  
6-10 կաթիլ կաթեցնելով առա-  
ւօտներն խմէ: Եթէ փտտած  
ակոսայներէ է շնչոյ դարշահո-  
տութիւնը նոյն հեղուկէն թէյի  
դըգալ մը գաւաթ մը ջրոյ մէջ  
դնելով բերանդ լվա:



Եթէ մէկը Մաղտանոսի վրայ  
քացախ լեցնելով սոխ ուտելէն



վերջը ուտելու ըլլայ, սոխի դար-  
շահօտութիւնը բերնէն կերթայ.

~~~~~

Ոմանց մարդոց ձեռքերն կը  
ճաթառին մանաւանդ ձմեռան  
մէջ, ասոր դարմանն ալ հե-  
տեւեայն է. Առ քաղցր իւղ  
1 բինթա. Վենետիկոյ թիրեմեն-  
թին 24 տրամ. խողի ճարպ  
կէս բառուդ. մեղրամոմ 24 տր-  
րամ. ասոնք ամենքը ամանի  
մը մէջ դնելով մեղմ կրակի  
վրայ հալեցուր, եւ մինչեւ  
մեղրամոմին լուծուիլն փայտէ  
դզալով մը խառնէ. երեկոյ-  
եան անկողին դացած ատեն  
ասկէ կամ ձեռքերուդ վրայ  
քսէ եւ կամ լաթի վրայ քսե-  
լով ձեռքիդ փաթաէ :

~~~~~

### ԴԱՐՄԱՆ ՔՕԼԵՐՍՅԻ

1. Քօլէրան երկու մասէ կը  
բաղկանայ. ասոնց մէկն է փոր-

հարութիւն եւ փոխել իսկ միւ-  
սըն է սպառումն կենսապահ  
ղօրութեան :

~~~~~

2. Փորհարութիւնը առանց  
ցաւի կակսի եւ քիչ ատեն անց-  
նելով պղտոր ջուրի նման կըլ-  
լայ, իսկ փոխունքը դեղին  
ջուր մ'է որ մերթ քիչ մերթ  
ալ առատ կըլլայ :

~~~~~

3. Քօլէրայի ամենէն լաւ  
դեղն է Համլինեան հեղուկը  
որ կը բաղկանայ հետեւեալ նիւ-  
թերէն հաւասար չափով:

Սֆիօն ռուհու

Քեաֆիրի ռուհու

Ռազէնտ ռուհու

Փորքշուքը սկսածին պէս  
այս դեղէն 30-40 կաթիլ առ-  
նելու է եւ ամեն փորհարու-  
թեան կրկնուելուն նորէն առ-



նելու է 5-10 կաթիլ աւելցը-  
նելով մինչեւ 60-80 կաթիլ  
կամ մինչեւ որ փորհարութիւ-  
նը դադրի :



5. Փորհարութեան դադրե-  
լէն զկնի նաեւ դեղէն տալու  
է 4 ժամը անգամ մը 25 կա-  
թիլ տալով եւ ամեն մէկ ան-  
գամին 5 կաթիլ պակաս տա-  
լով :



4. Չիսխելու համար ստա-  
մոքսին վրայ մանանեխէ խիւս  
(լափայ) դնելու է, ասի կը  
շինուի մանանեխի սերման  
փոշին քացախով խառնելով եւ  
լաթի վրայ առնելով : Հիւան-  
դին դիմանալուն չափ խիւսը  
ստամոքսին վրայ դնելու է :



5. Փսխելն դադրածին պէս

վերոյիշեալ դեղէն 50 կաթիլ  
1 կամ 2 դրգալ Ռօմի մէջ կա-  
թեցնելով խմցնելու է, եւ մէկ  
քովին վրայ պառկելու չէ այլ  
կռնակին վրայ .



6. Հիւանդին ուտելիքն լինե-  
լու է բրինձի ջուր, առանց ե-  
ղի եփած բրինձ, խորոված հաց  
եւ թէյ : Քօլէրան անցնելէն  
ետեւ ալ 2 օր նոյնը ուտելու է :



7. Հիւանդը որքան ալ աղա-  
ղակէ ջուր տալու չէ . արարի-  
ոյ խէժին ջուրէն դրգալ մը կըր-  
նայ ատեն ատեն դրուիլ 4 տը-  
րամ արարիոյ խէժը 100 տրմ.  
ջուրի համար բաւ է :



Հիւանդին ուժէ իյնալը խիտ  
վտանգաւոր նշան է : Չեռքերն  
ոտքերն, բազուկներն եւ սը-

րունդներն՝ մինչեւ անգամ լե-  
զուն եւ քիթը կը պաղին, ե-  
րեսներն եւ ձեռքերն կը կծկը-  
տին, կը քաշուին, անդգայ կըլ-  
լան եւ կը ցնցուին:

~~~~~

Այս դրութեան մէջ գտնուող  
հիւանդին անդամներն շփելու  
է եւ յետոյ մանանեխի խիւս  
(լափա) դնելու է ոտքին, սը-  
րունդներուն եւ ձեռքերուն վը-  
րայ. կրնան նաեւ տաք ջրոյ շի-  
շեր անդամոց քով շարուիլ: Ա-  
պուրի դրգալ մը Ռօժ կամ օղի  
տալու է հիւանդին 15 րոպէն  
անգամ մը մինչեւ որ տաքու-  
թիւնը վերադառնայ եւ հիւան-  
դը դգալ սկսի: Եթէ հիւանդը  
չ'տաքնայ կը մեռնի, փորահա-  
րութիւն ըլլայ թէ չէ. ուստի  
առանց ժամանակ կորսնցնելու  
վերոյիշեալ միջոցը գործադ-  
րուելու են:

~~~~~

Փորահարութեան եւ փսխե-  
լուն դադրելէն ետեւ շատ հի-  
ւանդներ ջերմ կուեննան. ուս-  
տի տաք թեյ կամ երիցուկի  
(փափաթիւ) թէյ տալու է. ե-  
թէ հիւանդը տկար է դաւաթ  
մը թէ՛քի մէջ արամ մը Ռօժ կամ  
կամ օղի խառնելու է եւ ժամը  
անգամ մը առնելու է: Ուտե-  
լիքը լոկ երիած բրինձի ջուր  
կամ երիած Բրնձ ըլլալու է:

Փորահարութիւնը սկսնելու լոկ  
թեթեւ նշաններն երեւան ելա-  
ծին պէս Համլինեան հեղուկէն  
առնելու է առանց ժամանակ  
կորսնցնելու:

~~~~~

Քլօլէրային տարածուիլը ար-  
գիւելու համար անոր գարշա-  
նաութիւն պարունակող կող-  
մերը Չինէ կամ կիբէ Բլօրուր  
(Chlorure de zine au de Cheud)  
դնելու է. եթէ այս աժան նիւ-

Թըն չ'գտնուի կրնայ զաւստի-  
կամ լոկ կիր կամ ածուխի փո-  
շի գործածուիլ :



Հիւանդին աղբամանին մէջ  
ալ յիշեալ նիւթերը դնելով  
գարշահոտութիւնը ջնջելու է :



Հիւանդը գարմանոզներուն  
ձեռքերը միշտ մաքրելու է որ  
չը փոխուին . աղտոտած լաթե-  
րըն եւ անկողնոյ ծածկոցք եւ  
ամեն այլ ինչ որ հիւանդին հա-  
մար գործածուած է այրելու է :  
Խմելու ջուրն ալ եփելէ ետեւ  
պէտք է ըմպել :



Այս կանոնաց ճշդիւ հետե-  
ւողք կրնան ազատիլ Քճլէրային  
ճիրաններէն :



ԽԱՌՆ

Ամեն տեսակ բրդեղէն ոչ ե-  
փելու ո'չ ալ եռացող ջրով ըլ-  
լալու է , այլ մէկ մաս Սալմեա-  
քի ողիին հետ 10 մաս ջուր  
խառնելով թրջելու , ճգմելու եւ  
ծեծելու է , յետոյ պարզ ջրով  
լուալէն ետեւ չորցնելու է :



Հանդերձները բռնկող անձը  
անմիջապէս ինքզինք գետինը  
նետնելով թաւալելու է , սովո-  
րաբար այսպիսի դժբաղդու-  
թեան պատահողներն կանգնե-  
լով եւ վազելով բոցերն աւելի  
կը կրակին :



Ճաթած երկաթ սօպայներն  
փակցնելու համար սու 3 մաս  
փոշիացեալ կաւ , 2 մաս ժան-  
գէ զերծ երկաթի փոշի , 1 մաս  
աւէ , 1/2 մաս աղ , 1/2 մաս



Պօրաքս . ասոնք ջրով խառնե-  
լէն ետեւ ան իջապէս ճա-  
թած տեղերն լեցնելու , եւ սօ-  
պայն կամաց կամաց կարմրե-  
լու չափ վառելու է :

~~~~~

Մլուկներն ջնջել . 16 տրամ  
սնդիկ եւ 2 հաւկիթի ճերմա-  
կըն դիրար խառնելով լաւ մը  
զարկ մինչեւ որ փրփուր մը ձե-  
ւանայ . այս նիւթէն մահճա-  
կալին կամ պատին ձեղքերուն  
եւ ուր որ մլուկներն կ'ապաս-  
տանին տարին մէկ երկու ան-  
գամ փետուրով մը քսէ :

~~~~~

### ԱՅԼ ՄԻՉՈՑ

Ա'ն 32 տրամ գինիի ոգի ,  
եւ նոյնչափ ալ բեւէկնիի իւղի  
ոգի , նաեւ 2 տրամ քամիուր ,  
եւ նոյնչափ եւս սպիտակ սըն-  
դիկ . բոլոր հիւթերն իրարու

խառնելով վրձինով մը մլուկնե-  
րուն բնակած տեղերն քսէ :

~~~~~

### ԱԻԵԼՈՐԴ ՄԱԶԵՐՆ ՎԱՐ ՏԱԼ

Ա'ն 8 տրամ կիր , 16 տրամ  
քառապոնաթ տըրօթաս , 1 տը-  
րամ ածուխի փոշի եւ տաք ջը-  
րով խմոր մը շինելով թափել  
ուղած մազերուդ քսէ , չորնա-  
լէն ետեւ շուտով վար տուր  
մազերուն կպած խմորը :

~~~~~

### ՍԱՆՏՐԵՐՆ ՄԱՔՐԵԼ

Գլուխդ սանտրել սկսելէդ  
առաջ սանտրին մեծութեանը  
չափ ֆանէլայի կտոր մը մո ,  
եւ սանտրին ակռայներն անոր  
մէջէն անցուր մինչեւ տակը ,  
յետոյ գլուխդ սանտրէ , եւ ֆա-  
նէլան ալ հանէ , որ ակռայնե-  
րուն մէջ մնացած աղան քաշե-  
լով դուրս կը հանէ . այսպէս

սանտորը միշտ մաքուր կը մնայ:



Ընտանի անասնոց վրայ գըտնուող ամեն տեսակ ոջիղներուն միակ դեղն է, զանոնք բէթրօլ կոչուած կազով օծելը:



Ամեն տեսակ կատաղի կենդանիներէ խածնուելով թունաւորելոց միակ դեղն է übermangansaeure kalie անմիջապէս վէրքին վրայ դնել. մաս մը այս նիւթէն 100 մաս ջրոյ մէջ լուծելով լաւ խցելով շիշի մը մէջ պահելու է:



Սեւ ներկ մաղերու համար. — Ա՛ն 3 արամ կիր, եւ վրան քիչ մը ջուր սրոկելով փոշիացնելէ ետեւ հետք մէկ արամ լեւրաժ խառնէ, եւ բարակ մազէ մը անցնելով ամանի մը մէջ դիր:

եւ վրան եռացող ջուր լեցնելով լաւ մը շաղուէ, եւ խմոր մը շինէ: Մազերը փունջերու բաժնելով սոյն խմորովը ծածկէ արմատէն սկսելով եւ կապուտ թղթի մէջ փաթթելով դէուխոզ լաթ մը կապէ անկողին գացած ատեն ստաւօտուն սոյն խմորը մաղերէն հեռացնելով պիտի տեսնես որ մաղերդ սեւ եւ միշտ ալ անանկ կը մնան: ցած են:



Ճարպէ մոմ մը, եթէ հըրացանի մէջ դրուելով դրան մը վրայ արծակուի, դուռն ծակելով կ'անցնի առանց ինքն վնասուելու. իսկ եթէ հրացանի գունդ մը ջրոյ մէջ արծակուի, ամենակարծր նիւթոյ մը դէմ զարնուելու նման իր կլորու թիւնք կորսնցնելով հարթ եւ հաւասար կ'ըլլայ:

Ախոռի մը շուրջը այրող տան մէջ եղած ամեն ձիերն աղատելու համար, անոնց աչքերն կապելով միշտ չենք յաջողիր զանոնք ազատել, եւ դուրս հանել. մարդու մը ձիերն այսպիսի վիճակի մէջ ըլլալով եւ ամեն ջանք զանոնք ազատելու ի դերեւ ելլելով, փորձեց ամոնց զարգերն վրանին դնել իրբեւ թէ սովորական աշխատութեանց կ'երթային եւ յաջողեցաւ զանոնք առանց դժուարութեան ախոռէն հանել եւ կրակէն ազատել :



Բարձր առարկայի մը բարձրութիւնը որոշելու համար Հնդիկներն չափել ուղած առարկային քովէն կը հեռանան եւ ծռելով սրունքներնուն մէջէն այն առարկային գագաթը կը նշմարեն եւ նշան մը դնելով

անկէց մինչեւ առարկային խորիսը կը չափեն . ասի նորա բարձրութեանը հաւասար է :



Կանանց հանդերձներն ամենայն կերպով ներդաշնակ ըլլալու են . բաց գոյնով շրջագրեստ եւ սեւ գլխանոց մը եւ մութ գոյնով շրջագրեստ մը եւ ձերմակ գլխարկ մը հաղնող կինը ամենայն ծաղու իրաւամբ արժանի կըլլայ . այսպէս հասկըցիր միւս կէտերն ալ :



Գլխարկի մը վրայի ծաղիկներն միմեանց ներդաշնակ եւ ընտրեալ ըլլալու են :



Տղայոց մտային կարողութիւնները այս կամ այն գիտութեան վարժեցնելը, զանոնք դաստիարակել ըսել չէ . դաս-



տիարակութիւնը ասոր մէջ չը կայանար . սողուն մտային կարողութիւնք յարտաքուստ ընդունելու չեն միայն , այլ ներքուստ գործելու են . դաստիարակութեան նպատակը տղայոց մտքերը ջրոյ մշտաբուխ աղբիւրի մը վերածել է , ուսկից անընդհատ կենդանի ջուր կը բըղխէ , եւ ո՛չ թէ « առնիճի մը , որ թէեւ մինչեւ բերանը կըրնայ լեցուիլ , սակայն վերջին կաթիլն ալ պարպելն դժուար չէ :



Դաստիարակութիւնը՝ մտաւորականէն թերեւս շատ աւելի բարոյականն այսինքն մարդու սիրտը կրթող անոր աղնիւ ըզգացումներն արթնցնող , եւ իրենց բնական վախճանին առաջնորդող դրէց մէջ ըլլալու է : Սրտի մշակումը , մտքինէն

շատ գերազանց եւ նախամեծար պէտք է առնենք , սրտի բարձր վիճակը Յիսուսի բոլոր քարոզութեանց նպատակն էր :



Ազնտ սկզբունք , ազնտ ազգաց մէջ :



Հաւկիթը պահելու համար բաւական է պահուելիք հաւկիթներն ձեթով , ճարպով , կամ քօլօտիոնով օծել :



Խիստ զօրաւոր քացախ կըրնայ պատրաստուիլ եթէ քացախի թթուին 1 մասին վրայ 5 մաս ջուր խառնենք :



Ֆոսֆօրը 1677ին դանուեցաւ :



Երաժշտական սքալան 1022ին  
հնարուեցաւ :

~~~~~

Զուկ մը կայ, որ 10,000.000  
հաւկիթ կ'ածէ :

~~~~~

Սարդ կայ, որ 2000 հաւկիթ  
կ'ածէ :

~~~~~

Քառակուսի ոտք մը մեղուաց  
փեթակին վրայ 6000 խոռոչ  
կը գտնուի :

~~~~~

Կովը օրը 100 լիպրա բու-  
սեղէն կուտէ :

~~~~~

Մէկ լիպրա մետաքս շինե-  
լու համար 2500 շերամ պէտք  
է :

~~~~~

Մեղուաց թագուհին 3 ամ-  
սուան մէջ 100,000 հաւկիթ  
կ'ածէ :

~~~~~

Կովը տարին 168 լիպրա կա-  
րագ շինելու չափ կաթ կու-  
տայ :

~~~~~

Մէկ լիպրա ոստայն շինելու  
համար 27,600 սարդ պէտք է :

~~~~~

Պաղլեղը 1500ին գտնուեցաւ :

~~~~~

Յամի տեառն 1000ին լաթի  
կտորներէ թուղթ շինելու ար-  
հեստը գտնուեցաւ :

~~~~~

Վառօթը 1553ին Քօլօնիոյ  
մէջ ճգնաւոր մը գտաւ :

~~~~~

Դիտակը 1590ին Գերմանիոյ մէջ գանուեցաւ :



### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՍԻՆՁ

Մէկ մաս պարզ թութգալըն խիստ փոքր կտորներու բաժնելով 16 մաս ջուրի մէջ բոլոր գիշերը պահելու է . առաւօտուն եփելով կէսը շոգիացունելու եւ լաթէ անցնելով դեռ տաք եղած ատենը վրան Յմաս սրիրթօ լեցնելու է , եւ անմիջապէս վրան 1 մաս ձութ (մասթիգա) եւ 6 մաս սրիրթօ աւելցընելով վրան կամաց կամաց ամօնեաքի փոշի լեցնելու է : Ասի քարէ , փայտէ եւ ապակիէ կտորած անօթներն կը կպցնէ . փակցուելիք նիւթերն գործածութեան սկսելէ առաջ տաքցընելու է : Գերմանացիք զափ Հայկական Սոսինձ կանուանեն :



Կօշիկներն անձրեւին ազդեցութենէն աղատ պահելու համար զանոնք Ռիչինի իւղով օծելու է :



Գարնանային յաճախակի հարբութէն բժշկուելու համար դեղարանէն ա՛ռ Օլֆաքթօրիում Անթիքաթարօիքում Հակէրի եւ հոտոտէ . հին հարբութն անգամ կը բուժէ :



Հոլանտացիք Հնդկաց կղզիներուն վրայ կինամոնի թուփերըն արմատէն կը խլեն որպէս զի կինամոնը իր բարձր արժէքը չը կորսնցնէ : այսպէս ալ դու զուարճութեանցք թիւն միշտ նուազ պահէ որ անոնք իրենց յարզն եւ արժէքը չկորուսանեն :





Ահնոցը 1280 ին կամ ըստ ումանց 1511 ին գտնուեցաւ, ըստ ոմանց Ալէքսանար տէ Սրինա ճգնաւորէն եւ ըստ այլոց Սալվինօ տէլլի Սրմատթի անուն հարուստ Ֆիօրէնչիացիէ մը: Առանց աչաց պահանջմանցը ակնոցը իբր զարդ գործածելն Ապանիոյ մէջ ծնունդ առած է:



Յախճապակի, ապակի, քար եւ փայտ փակցնելու համար ա՛ռ մէկ մաս նոր այրած կիր եւ այնքան ջրով լուծէ որ ապուրի նման թանձր ըլլայ: Ասոր վրայ մէկ մասին երեք քառորդը կաւիճի կամ ոստրէի կեղեւի փոշի աւելցուր եւ հետը մէկ մար լաւ փոշիացեալ հին պանիր գիր. դասոնք լաւ մը խառնէ մինչեւ որ թանձրանայ. փակցուելիք անօթիւերն նախ տաք ջրով թրջելու է:

Կօշիկին կաշին կակուղ եւ ճաթուտիչէ զերծ պահելու համար կաղնիին կեղեւը եփէ եւ այնքան շողիացուր որ հեղուկը խիստ զօրաւոր ըլլայ. ասոր երկու մասին հետ մէկ մաս շաղ խառնելով լաւ մը զարկ մինչեւ որ կարագի նմանի. ասի լաւ մը սեխմէ եւ ջուրը մէջէն հանելով վրան երկու մաս ածուխի թութու (Քարպոնիք ասիտ) աւելցնելով չորցած կոշիկներն թրջելու եւ այս բաղադրուածեամբ լաւ մ'օծելու է:



Այլ եւ այլ նիւթերն ջրոյ անթափանց ընելու համար առ 10 մաս շաղ եւ 10 մաս Բլումպուամ ասէթիքիւմ կոչուած նիւթէն. ասոնք զատ զատ պէտք եղած չափ ջրոյ մէջ լուծելէ ետեւ երկու հեղուկներն իրարու հետ խառնէ եւ թող որ մը-

նայ . յետոյ երեսէն պարզ հեղուկը առնելով վրան 1000 մաս ջուր աւելցուր որուն (ջուրին) մէջ քիչ մը ձկան ոստինձ լուծուած ըլլալու է : Ինչ բան որ անթափանց ընել կուզես 12 ժամ այս հեղուկին մէջ դիր եւ յետոյ չորցուր :



### ԵՐԿՐԱՔՈՐԾԱԿԱՆ

Կովերն կթելու մասին պէտք է գիտնալ որ թէ կթողն եւ թէ կենդանին մաքուր լինելու են :



Կթողին ոչ թէ միայն մարմինը այլ նաեւ հանդերձներն մաքուր պէտք են ըլլալ , իսկ կենդանւոյն ծիծերն եւ ստինքներն դոնէ ամեն կթելէ ետեւ գաղջ ջրով լվալու է :



Կթած միջոցին կենդանին փայփայելով հանդարտ պահելու է . եթէ կենդանին ծեծելով հանգիստ եւ անշարժ պահելու ջանք ըլլայ խիստ դժուար կըլլայ կթելն , կենդանին կաթը կը պահէ եւ երթալով կաթը կը նուազի :



Կթուած ատեն անհանդարտ չկեցող կովը կամ տարիքով խիստ փոքր եւ կամ դիւրագրգիռ ըլլալու է , ասոնք ալ մեղմութեամբ եւ փայփայանքով կրնան վարժուիլ :



Ստինքներուն հիւանդութիւնըն ալ կովերուն հանդարտ չը կենալուն պատճառ կրնան ըլլալ , ուստի ան ատեն ասոր դարման մը գտնալ ջանալու է :



Լոկ յամառութեամբ կթելն

արգիլել ուղող կովերուն կըռ-  
նակին վրայ կթելէ առաջ պաղ  
ջրոյ մէջ թաթախեալ մեծ լաթ  
մը տարածելու է, կամ կթե-  
լէն օր մ'առաջ կենդանւոյն  
պոչը վերէն, մէջտեղէն եւ վա-  
րէն հնար եղածին չափ պինդ  
կապելու եւ կթել չսկսած կա-  
պերն քակելու է :



Կովերն օրը երեք անգամ կը-  
թելու է . կթելու յարմար ժա-  
մանակը անոնց կերակուր կե-  
րած ատենն է :

Երկու անգամ կթող կովը  
երեք անգամ կթուողէն նուազ  
կաթ կուտայ :



Կաթը որքան երկար ատեն  
ստինքին մէջ մնայ, այնքան  
քիչ սլարարտութիւն կունենայ :



Փորձուած է որ առաւօտեան

կաթը խիստ քիչ կարագ կու-  
տայ, կէս օրուանը աւելի, իսկ  
երեկոյեանը ամենէն առատ :



Կթած ատեն վերջին կաթին  
անգամ ստինքէն քամելու է :



Կաթին առատութիւնը եւ  
լաւութիւնը ոչ թէ միայն կու-  
վին տեսակէն, տարիքէն եւ  
կերակուրէն (տեսակէն եւ չա-  
փէն) է կախեալ, այլ մանաւանդ  
կթելու եղանակէն :



Եթէ կթողը ծոյլ մէկն է եւ  
մինչեւ վերջին կաթին քամելէ  
կը ձանձրանայ, երկրագործը մեծ  
փնաս կը քաշէ :



Այս կերպով կթուած կովը  
կաթին չափն կը պակսեցնէ եւ  
ստինքին յատակի կաթը պա-



բարտադոյնն լինելով եւ ասի  
ալ չկթուելով կաթը լոյծ եւ  
ջրոտ կըլայ :



Կթել չսկսած պէտք է ստին-  
քըն եւ ծիծերն գաղջ ջրով լը-  
վալ , յետոյ ստինքը քանի մը  
րոպէ ձեռքոյն թոթուել եւ  
յետոյ կենդանւոյն աջ կողմը  
անցնելով կթել սկսելու է :



Երբ կաթը լաւ չհոսեր , ըս-  
տինքներն վերստին թոթուե-  
լու են , որով ստինքին յատակի  
պարարտ կաթը ջրախառնին հետ  
միանալով ծիծերէն դիւրաւ կը  
հոսէ :



Առանց ստինքներն թոթուե-  
լու կթելով նախ ջրախառն  
կաթն կը քամուի յետոյ պա-  
րարտն գալով այնքան դժուա-  
րաւ կը քամուի որ ծիծերն ձե-

ռաց շիուսէն կը վիրաւորին :



Ուստի յայտնի է որ կոյն ալ  
կթելու թոյլ չտար , եւ կաթն  
ալ ստինքին նուրբ անցքերուն  
մէջ մնալով կը խցէ զանոնք եւ  
կոյն ալ կը դադրի կաթ տալէ :



Բնութիւնը հորթին եւ գառ-  
նուկին այսպէս սովբեցուցած է,  
անոնք իրենց մօրն ստինքներն  
դիւրոյն մերթ ընդ մերթ հար-  
ուածելով կը ծծեն :



Առաջի անգամ մայր եղող կո-  
վը հնար եղածին չափ յաճախ  
կթելու է , ասով ստինք կը մեծ-  
նան եւ առատ առատ կաթ  
կարտադրեն :



ԽԱՂՈՂ ՊԱՀԵԼ

Պահել ուղուած խաղողին

ողկոյղներն հասուննալէն ետեւ  
ալ կտրելու չէ այլ որթին վրայ  
թողելու է որքան ատեն որ  
հնար է :



Ողկոյղը ճիւղովն մէկտեղ կըտ-  
րելու է բայց անանկ որ ող-  
կոյղը ճիւղին մէջտեղն ըլլայ եւ  
վերի ու վարի կողմէն երեքա-  
կան կոճակ թողուի :



Ճիւղին վերի ծայրը պատ-  
ուաստի մաճունով լաւ ծեփե-  
լու է իսկ վարի ծայրը ջրով  
լեցուն չիչի մէջ դնելու է :



Այս շիշին յատակը կարգ մը  
ածխոյ փօշի դնելու է եւ այն-  
պէս ջուրն վրան լեցնելու է ,  
որպէսզի ջուրն չաւրուի , եւ  
ճիւղը մէջը դնելէն ետեւ բե-  
րանը օդախիտ գոցելու , եւ այս  
շիշերը իրարմէ հեռու պահելու

է : Այս կերպով խաղողը 8-10  
ամիս կրնայ պահուիլ :



### ԹԱՆՁԻ ԴԵՂ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱՅ ՀՍՄԱՐ

Ափսոնի , կարմիր պղպեղի ,  
խաշնդեղի , վայրի անանուխի  
եւ քափրի ոգի հաւասար չա-  
փով մէկտեղ խառնէ եւ թանջ  
ունեցողին 10-20 կաթիլ 3 չա-  
յի դգալ ջրոյ մէջ դնելով խրմ-  
ցուր . քանի մը ժամ ասի կըրկ-  
նելու է մինչեւ որ թանջն դադ-  
րի . թանջը սաստիկ ըլլայ նէ  
դեղին չափն աւելցուր . հըն-  
դախտի դէպքերու ատեն ով որ  
այս դեղէն պէտք է շաճապէս  
դորձածէ թող չվախնայ այն  
ախտէն : Այս դեղն առնողն  
թող զգուշանայ պաղէ եւ բան-  
ջարեղենէ , եւ լոկ հացով , չա-  
յով եւ շատ եփած որդեղէն պո-  
րով կշտանալու է :



ԾԻՐԱՆ ԵՒ ԴԵՂՁ ՊԱՀԵԼ


Ծիրանը եւ դեղձն հետեւեալ նոր գիւտոյ միջոցաւ բոլոր ձրմեռուան եղանակին մէջ կրնան պահուիլ թարմ եւ իրենց բնական վիճակին մէջ: Այս պտուղներէն պահելու համար մասնաւորապէս իրենց կատարելապէս հասունալէն առաջ ժողուելու է առանց ձեռքով բռնելու այլ ասօյ տերեւով բռնելով, եւ ժողուած միջոցին զգուշանալու է մատ դպցնելէ. յետոյ պէտք է երկայն բարակ աղնիւ կտաւի կտորներու մէջ փաթտել զանոնք մի առ մի, 5 4 սանթիմեթր երկայնութեամբ պոչերալ լաթէն դուրս ձգելով: Առ լաւ տեսակ անարատ մեղրամոմ եւ մաքուր ամանի մէջ դիր եւ հալեցուր բայց ոչ թէ կրակի այլ տաք ջրոյ վրայ ամանը ջրին մէջ դնելով. երբ լաւ մը տաքցած է հեղուկը, լա-

թի մէջ փաթտած պտուղներն արագ արագ պոչերնուն բռնելով հեղուկին մէջ խօթել հանելու եւ թողելու է որ ինքնիրեն չորնայ. չորնալէն զկնի այս գործողութիւնը կրկին եւ կրկին ընելու է մինչեւ որ իւրաքանչիւր պտուղն իւր վրայ Չ հազարակրամ մեղրամոմ ունենայ զինքն շրջապատած: Երբ պտուղներն այսպէս լաւ մը օծուած են, ցորենի թեփով լի փայտէ տուփերու մէջ դնելու է մի առ մի, այն կերպով որ իրարու չը դպչին. հուսկ յետոյ տուփերուն բերաններն լաւ մը գոցելով բոլոր ծակտիքներն ալ սոսնձեալ թղթով գոցելու է որ ներս օդ չմտնէ, եւ չոր տեղ մը պահելու է. այս պարզ եւ դիւրին միջոցով բոլոր ձմեռուան եղանակին մէջ ձիշգ ամառուան ծիրանն ու դեղձը կուսնենանք:





ԲԱՄՊԱԿԸ ԿՈՒՏԷՆ ԶԱՏՈՂ,  
ՄԵՔԵՆԱՅ



Այս մեքենան որ Ամերիկայի  
մէջ հնարուած է բամպակի մը-  
շակութեան զբաղող ամեն երկ-  
րագործի խիստ օգտակար եւ  
կարեւոր է :

Կը ծախուի Ս. Մ. Մինասեա-  
նին եւ ընկ. Վաճառատունը .  
Կ. Պօլիա Ղալաթիա



ԱՂՕՐԻՔ ԵԴԻՊՏԱՅՈՐԵՆԻ



Այն պատկերին մէջ տեսնուող  
երկրագործական մեքենան Ե-  
գիպտացորենը վայրկենի մը մէջ  
հատ հատ կընէ (թանկէթմէք) .

նորա օգուտները բազմադիմի են, որոնց գլխաւորն է ժամանակի շահը: Մեր բոլոր համազգի երկրագործաց ուշադրութեանը կը յանձնեմք այս օգտակար եւ կարեւոր մեքենան որ կը ծախուի.

Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Վաճառատունը Ղալաթիա.



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՔՍԱՆ ՄԻԼԻՑՆ

Չարաչար Զեյցուած երկրասարդներ

1772 Էն մինչեւ 1872 պատերազմի մէջ իրենց կեանքն կորսնցնող երիտասարդաց թիւը 20 միլիօնը կանցնի:

Գաղղիա՝ Միացեալ-Նահանգաց անկախութեան համար 400 հազար երիտասարդաց արիւնը թափեց. Գաղղիոյ հանրապետութեանը համար 1 միլիօն 800

հազար հողի զոհ եղան. կայսերութեան համար 6 միլիօն 100 հազար. 1815 Էն ի վեր Գաղղիա իր ունեցած 13 պատերազմացը մէջ 2 միլիօն 250 հազար հողի զոհեց: Ուստի 100 տարուան միջոցին միայն Գաղղիա 10 միլիօնէ աւելի ընտրեալ երիտասարդաց անդին կեանքը յաշխարհէ ջնջած է:

Բրուսիա սոյն 100 տարուան մէջ 600 հազար հողի կորսնցուցած է, Անգղիա՝ մէկ միլիօն. Ռուսիա՝ մէկ միլիօն 300 հազար. Թուրք, Պարսիկ եւ Յոյնք՝ 1 միլիօն 350 հազար. Աւրստրիա՝ 150 հազար. Իտալիա՝ 800 հազար. Սբանիա՝ 450 հազար. Բօրթուգալ՝ 110 հազար. Միացեալ-Նահանգ 1 միլիօն 200 հազար. փոքր տէրութիւնք ի միասին՝ 150 հազար. Խորհէ 20 միլիօն երիտասարդ. ընտրեալ, զօրաւոր, քաջ, ա-

ոողջ , անբիծ եւ անարատ եւ  
բիտասարդք 100 տարուան մէջ  
զինու զօրութեամբ աշխարհէս  
բնաջինջ ընել , սարսափելի ի-  
րողութիւն :



Լօնտօնի թատրոններէն մէ-  
կուն մէջ գող մի հարուստ պա-  
րոնի մի աղամսնդեայ կոճակ-  
ներն կտրելով գողցաւ . պա-  
րոնը բանը իմանալով իսկոյն  
գրպանէն զմելին հանեց եւ գո-  
ղին ականջներն կտրեց . կեցիր ,  
կը պոռար վիրաւորեալ աւա-  
զակը , առ սա կոճակներդ .  
բարի , պատասխանեց պարո-  
նը , դուն ալ առ սա ականջ-  
ներդ :



Սիբսթոս Ե. Պապն կարտի-  
նալ եղած ատեն ծեր ըլլալով  
միշտ ծռած կը քայլէր , սակայն  
պապական գահն ելած ատեն

երբ մէկն գիտողութիւն ըրաւ  
թէ ալ ուղիղ կը քայլէր , սա-  
պէս պատասխանեց նմա . կար-  
տինալ եղած ատենս Ս. Պետրո-  
սին բանալիներն կը վնտռէի ,  
ուստի պէտք էր ծռիլ , իսկ այ-  
ժըմ զանի գտած լինելով ալ  
եւս ծռելու հարկ չկայ :



Պղատոն փիլիսոփային ըսին  
թէ ումանք իրեն վրայ գէշ կը  
խօսին , հոգ չէ ըսաւ նա , պի-  
տի ջանամ այնպիսի կեանք մը  
անցնել որ ոչ ոք անոնց ըսա-  
ծին հաւատայ :



Անգամ մը , կրտէ Թիմուր  
Լէնկ , Թաթարաց այս անուա-  
նի աշխարհակալը , թշնամինե-  
րէս փախչելով աւերակաց մէջ  
պահուրտեցայ , ուր քանի ժամ  
միտքս իմ անյոյս վիճակիս վը-  
րայ դարձուցի , բայց յանկարծ



մըջիւնի մը շարժմունքներն աչ-  
քիս դպան . այս մըջիւնը ցո-  
րենի հատ մը պատէն վեր հա-  
նել կը ճգնէր . նկատեցի որ ցո-  
րենի հատը 69 անգամ գետինը  
ինկաւ բայց միջատը յարատե-  
ւեց եւ 70րդ անգամին իւր տա-  
նելիք տեղն տարաւ զայն . այս  
տեսարանէն քաջալերուեցայ ,  
եւ ասի մեծ դաս մ'եղաւ ին-  
ծի իմ բոլոր կենացս մէջ :



Ծեր մարդ մը ջորին հեծած  
գիւղ կերթար , նոյն ճամբուն  
վրայ երկու սրիկայներ ալ կա-  
յին որ ձերունւոյն մօտենալով ,  
մին աջէն եւ միւսն ձախէն ,  
սկսան զայն ծաղրել , ըսելով  
անոր . Շիտակ ըսէ բարեկամ ,  
դու աւելի յիմար ես թէ շո-  
շորդ : — Շիտակը լաւ չեմ գի-  
տեր , ըսաւ ձերուկը , բայց սա  
գիտեմ որ հիմակու հիմայ եր-  
կուքին մէջտեղը կը գտնուիմ :

1587 ին Փիլիպպոս Բ. Սպա-  
նիոյ թագաւորը Սիքսթոս Ե.  
Պապին երիտասարդ դեսպան  
մը խրկեց , զոր Պապը տեսնե-  
լով նեղացաւ եւ ըսաւ . Ձեր  
թագաւորն Սպանիոյ մէջ մարդ  
չգտնելով ձեզ նման անսօրնւս  
մէկը ինձ է խրկեր : — Եթէ իմ  
տէրս գիտցած ըլլար որ դուք  
մօրուքի վրայ արժէք կը դնէք ,  
պատասխանեց խորիտ Սպան-  
եօլը , նա իմ տեղս ձեզի այժ  
մը կը խրկէր :



Փիլիսոփայ մի որ նաւ հեծ-  
եալ գետի մը վրայէ կը ճամբոր-  
դէր նաւավարին հարցուց թէ  
թուաբանութիւն գիտէ : Այդ  
բառը գեռ նոր կը լսեմ ըսաւ  
նաւավարը : — Խիստ կը ցաւ իմ ,  
կենացդ մէկ քառորդը կորսը-  
ւած է ըսաւ փիլիսոփայն . Գիչ  
մը յետոյ դարձեալ հարցուց ա-  
նոր թէ բնագիտութիւն գիտէ ,

Ոչ պատասխանեց մարդը : Ե՛ր, աստեղարաշխուժենէ կը հասկընամս, ըսաւ նորէն : Չէ պատասխանեց նաւաւարը : Ո՛հ, կենացդ կէսը կորսուած է, ըսաւ փիլիսոփայն : Ճիշդ այս միջոցին նաւը ժայռերու մէջ խրեցաւ եւ ընկղմելու վրայ էր, նաւաւարն իսկոյն ցատկեց եւ հանդերձներն հանելով « բարեկամ լողալ գիտէ՞ք » ըսաւ իմաստասէրին : Ո՛չ ըսաւ փիլիսոփայն : Աւանդ, դոչեց նաւաւարը, քու բոլոր կեանքդ կորսուած է, զի նաւն ընկղմելու վրայ է :



Աստեղագուշակ մը Լուի ԺԱ. ի բարեկամուհիներէն միոյն համար գուշակեց թէ ութ օրէն պիտի մեռնի, որ ճիշդ կատարուեցաւ, սակայն թագաւորը այնքան բարկացաւ որ հրամայեց ձերբակալել աստեղաբաշ-

խըն եւ նշան տալուն պատու հանէն վար նետել . ծառաներն բռնելով զայն թագաւորին առջեւն հանեցին որ ըսաւ անոր . Գուն որ այլոց բախդն կը գուշակես ըսէ նայիմ դուն երբ պիտի մեռնիս : Ձեր վեհափառութենէն երեք օր յառաջ, պատասխանեց աստղաբաշխը : Աւելորդ է ըսել որ թագաւորը զայն վար նետելոյ նշանն չը տուաւ :




Անգամ մը ծոյն ալէկոծեալ ատեն նաւու մը մէջ տղայ մը կար որ մինչդեռ այլք վախերնուն ինչ ընելիքնին չը գիտէին, նա առանց վախի հանդիստ, հանդարտ կեցած էր անխուով : Երբ պատճառն հարցուեցաւ, ըսաւ, ինչո՞ւ վախնամ, մինչդեռ նաւուն ղեկավարն հայրս է :





ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑ



Ամերիկայի Հնդիկներն հեռադրաց թելերն միշտ կառելին այնպէս որ աերութիւնը չէր գիտէր թէ ինչ միջոց գործածէ անոնց դէմ: Զօրապետ մը ա-

նոնց վրայ արշաւելով բաւական գերի ձեռք ձգեց: Օր մը դանոնք ի մի վայր հաւաքելով ելեքտրական մարտկոցն պատրաստեց եւ թելերը վրան անցնելով, ըսաւ որ թելերն բռնեն: Գերիներն հրամանին հնազանդեցան, զօրապետը ելեքտրական հոսանքն ազատ թողածին պէս զօրաց ջիղերը ուժով մը սեղմեցին թելերը եւ հնար չէր զանի թողուլ: — Անպիտաններ, թելերը թողուցէք — կը պօռար զօրապետը: — Չենք կարող — պարոն զօրապետ, — կադաղակէին Հնդիկները: Բաւական ատեն այսպէս զուարճանալէն ետեւ զօրապետը հոսանքը դադրեցուց, եւ վարպետութիւն ծախելով հրամայեց, որ այս բանը իրենց երկրացիներուն չպատմեն, որպէսզի բռնուին. յետոյ գերիները թող տուաւ: Իսկ նո-



քա երթալով եղեւուծիւնը Հրն-  
 դիկներուն պատմեցին . անոնք  
 ալ կարծելով թէ այս թելերն  
 այն նպատակաւ հոն հաստա-  
 տած են , որ իրենց ընկերացը  
 նման հոն բռնուին մինչեւ որ  
 զօրքերն գալով զիրենք գերի  
 տանին , ո՛չ թէ միայն անոնց  
 չէին դպչեր , այլ տակէն ան-  
 գաւ չէին անցներ :



Բրուսիոյ Թագաւորին թիկ-  
 նապահներէն մին ժամացոյցի  
 ոսկի շղթայ մը ընծայ ընդու-  
 նեց : Բայց չկրնալով ժամացոյց  
 մը գնելու չափ դրամ հաւա-  
 քել , շղթային ծայրը հրացանի  
 գունտ մը անցուց , եւ միշտ  
 գրպանը կը պահէր դայն : Թա-  
 գաւորը թիկնապահին փառա-  
 սիրութիւնը լաւ գիտնալով օր  
 մ'ուղեց , դանի ծաղր ընել : —  
 Ժամը քանին է , — հարցուց  
 Թագաւորը թիկնապահին : —

Տէր արքայ — ըսաւ թիկնա-  
 պահը — իմ ժամացոյցս ժամա-  
 նակը չցուցնէր , սակայն ինձ  
 կը յիշեցունէ , որ ամեն ժամ  
 ձեր վեհափառութեան համար  
 կեանքս տալու պատրաստ լի-  
 նելու եմ : — Թագաւորը այս  
 պատասխանին այնքան գոհ ե-  
 դաւ , որ իւր ադամանդազարդ  
 ժամացոյցը անմիջապէս թիկ-  
 նապահին տուաւ :



ՄՐՅԱՆԱԿԱԻՈՐ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1875 թուին Հանելուկներն  
 առաջին անգամ լուծողն եղաւ  
 Պետրոս Էֆէնտի Մ. ձէվահիրճ-  
 եան (առ մեզ խրկուած Յ. Ս.  
 Մազըմեան Էֆ. ի կողմանէ) եւ  
 խոստացեալ մրցանակն ընդու-  
 նեց : Առաջինին լուծումն էր  
 ԱՆՏԱՌԻ իսկ երկրորդինը՝ ՀԱՅ  
 ՏԱՌԵՐՆ :

Թէ Պօլիսէն եւ թէ գաւառ-

ներէն 40 էն աւելի նամակներ  
եկան մեզի որք Հանելուկներ  
բուն լուծումն պարունակէին .  
ասոնց ալ մեծագոյն մասը ու  
ղիղ պատասխաններ կը բովան-  
դակէին .

1872 թուին հանելուկներն  
կը նշանակեն Ծրածան, Կայ-  
ծակ, Հեռագիր, Ամպ եւ Օդ,  
Հուր, Հող, Զուր, զորս լու-  
ծեց Պ. Ն. Ա. Աշոյանց Աշակերտ  
Մեղպուրեան վարժարանի 'ի  
Պօլլիս :

~~~~~

Հետեւեալ նոր Հանելուկներ  
ըն ԱՌԱՋԻՆ անգամ լուծողը  
անոնց «Մշակ» համար հինգ  
արծաթ մէճրանոց գիրք մը պի-  
տի ստանայ երբ դիմէ առ Հե-  
ղինակն Օրացոյցիս 'ի Ֆրէնկեան  
գրատուն :

~~~~~

1. Աշխարհի ամեն լեզուներն  
հով կը խօսի :

~~~~~

2. Ի՞նչ է նա որ թագաւորն  
հաղիւ կը տեսնէ իսկ հասարակ  
մարդ մը ամեն օր :

~~~~~

3. Ո՞ր կրակը միշտ պաղ է :

~~~~~

4. Ո՞ր ծովերը ջուր չ'ունին .  
քաղաքները տուն չ'ունին , լեռ-  
ները ծառեր չ'ունին , դաշտե-  
րը պտուղ չ'ունին :

~~~~~

5. Հեյր տարւոյն մը մասին  
մէջ ամեն այլ ատենէ սակաւա-  
գոյն կուտէ :

~~~~~

6. Ո՞ր ձկանց աչքերն միմ-  
եանց խիստ մօտ են :

~~~~~

7. Խոհանոց բերուած ժամա-  
նակ սեւ է իսկ սեղանին վրայ  
զրուած ատենը կարմիր : Ի՞նչ  
է աս :

~~~~~

8. Թէ եւ ոտք չ'ունի բայց  
չարունակ կը քալէ : Ո՞վ :

~~~~~

9. Զուրը ե՞րբ մազով կրնայ  
տարուիլ :

~~~~~

10. Թէ եւ առաջուց շինուած  
է, բայց ամեն օր նորէն կը շին-  
ուի:— Ի՞նչ է աս:—



### Ա.Ռ.Ա.Ծ.Ք

Մարդս չպարիր ուտելու հա-  
մար այլ կուտէ ապրելու հա-  
մար :

~~~~~

Սխալիլը մարդկային է ներե-  
լը Աստուածային :

~~~~~

Աւելի պատուաւոր է ներե-  
լը քան թէ վրէժ առնելը :

~~~~~

Քաղցր է հայրենեաց համար  
մեռնիլ :

~~~~~

Հպարտութիւնը մարդու ա-  
ւելի սուղի կուգայ քան թէ  
քաղց, ծարաւ եւ ցուրտ :

~~~~~

Քիչ ուտելնուս համար քիչ  
անդամ կը զղջանք :

~~~~~

Այն բանը որ յօժարութեամբ  
կրնենք բնաւ ձանձրանալի չէ :

~~~~~

Ոսկին փոշի մ'է որ ամենուն  
աչքերն կուրացնէ :

~~~~~

Աւելի դիւրին է առաջին կամ-  
քը կտարել քան թէ անոր ետե-  
ւէն եկած ամեն կիրքերը չկա-  
տարել :

~~~~~



Կուղես հաւատարիմ ծառայ  
մը ունենալ, դուն քեզի ծա-  
ռայէ :



Շատ անգամ կրկնուած քե-  
զը՝ շատ կըլլայ :



Թէ որ գործդ գլուխ հանել  
կուղես, դուն անձամբ գնա .  
թէ որ չես ուզեր, ուրիշը խըր-  
կէ :



Ստակը ծախք ընելէդ առաջ  
ձեռացդ մէջ դանի երկու ան-  
գամ դարձուր, եւ խորհէ թէ  
նրքան աշխատութեամբ դանի  
չահեցար :



Պարտք ունեցողը ազատու-  
թիւնը կորսնցնելով դերի կըլ-  
լայ :



Կուղես դրամին յարգը ճանչ-  
նալ . փոխառութիւն ընելու  
փորձն ըրէ, եւ պիտի տեսնես  
թէ նրքան դժուար է :



Ծուլութիւնը ամեն բան դըժ-  
ուար կը գանէ, ժրութիւնը ա-  
մեն արգելք կը յաղթէ :



Յիմարին նետած վրան ի-  
մաստունը կառնէ :



Շոյուղութեանց ամենէն գէ-  
շը ժամանակին յարգը չգիտնա-  
լին է :



Զուարճութիւնք իրենցմէ  
փախչողներուն ետեւէն կը վա-  
զեն .



Եթէ ընկոյզ մ'ես գիտցիր որ  
օր մը երկու քարի մէջ տեղը  
պիտի կոտորիս :



Յիմարը ուղտին կռնակը կը նստի եւ տակաւին անոր կուզը կը ծաղրէ :

~~~~~

Բամպակ կուզես հնձել—կանեփի հունտ մի ցաներ :

~~~~~

Փոքրիկ միջատներն շատ անգամ ահագին վիշապներէն աւելի վիսասակար են :

~~~~~

Ազգիս մէջ շատ գրքեր ու լըրագիրներ կը տպուին, որոնք զիտես մարդս երբ կը լուսաւորին—երբ որ անոնց թուղթերովն սենեակին ազատ ապակիներն մաքրենք :

~~~~~

Այն որ այլոց սխալներովն կզբաղի ժամանակը գէշ կերպով կանցնէ :

~~~~~

Որկորը (պողազը) աւելի մարդ սպաննած է եւ կսպաննէ քան սուր, հրացան եւ թնդանօթ :

~~~~~

Եթէ արմաւենի մ'ես, պէտք է որ համբերես երբ ամեն յիմար գրեզ քարկոծէ :

~~~~~

Փոքրիկ աստղերն միշտ փայլուն մնան, իսկ այն ահեղ արեգակը շատ անգամ կը խաւարի :

~~~~~

Թաքեալ կայծէն աւելի վախցիր քան թէ յայտնի սուրէն :

~~~~~

Յաղթողին ազդեցութիւնը պարտելոյն վրայ մեծ է երբ նա անոր հետ մեղմութեամբ վարուի :

~~~~~

Լաւ է առիւծին բարկութիւն

նը քան աղուէսին բարեկամու-  
թիւնը :

~~~~~

Տղադ քաղցը պտուղներէն  
զգուշացուր, դառն պտուղնե-  
րըն ինքնին զանի կզգուշացը-  
նեն :



ՏՕՔԹՕՐ Կ. ՎԱՐԳԱՆԵՆԱՆ



Բժիշկ, Վիրաբոյժ եւ Ման-  
կաբարձ :

Գոռնգաբոշ Պատրիար-  
քարանի փողոց :



# Մ. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԵՒ

## ՅՐԵՄԻԱՅ

Ամբերկեան վաճառատուն Ղալաթիա  
Բէլէմպէ Պաղար. Եէնի Ճամբի դրան  
կից :





ՀԵՐ ՎԻԿՕՐ ՏՕՔԹՕՐ ԱՅԷՐԻ  
Այս հրաշալի դեղը, որ բը

ժըշկական հազարաւոր վկայու-  
թիւններով վաւերացեալ եւ Նւ-  
րուպայի եւ Ամերիկայի մէջ գը-  
րն թէ ամեն տուն ընդունելու-  
թիւն գտած է, ոչ թէ միայն  
մազերը քիչ ատենի մէջ կաճե-  
ցընէ, այլ նաեւ անոնց բնական



գոյնը կը սահէ, գլուխը թէփէ  
կը մաքրէ, մազերը կը փայլե-  
ցընէ եւ կը կակոզցնէ եւ գլխուն  
եռքը ու ցաւերը կը բուժէ :  
Կը ծախուի Ս. Մ. Մինասեան  
եւ ընկ. Վաճառատունը : Շատ  
առնողին դեղջ կըլլայ :



ՍԱՐՍԱԲԱՐԻԼԼԱ ՏՕԲԹՕՐ ԱՅԻՐԻ

Այերի Սարսաբարիլլան գրտնուելէն ի վեր հետեւեալ հիւանդութիւնները, որք շատ անգամ բժշկաց գործածած ամեն միջոցները ծաղր կընէին, խիստ դիւրայաղթելի եղան, մինչեւ անգամ ամենաաղքատ ընտանեաց շրջանին մէջ ալ : Այերի Սարսաբէլլան դեղ է

խոյլի, վերէֆ, լեարդի, ստամորսի եւ երիկամանց հիւանդութեանց, մորթի բորբոքմանց, վերքերու, ուռեցքներու, գօսութեան, ասթմայի, ոսկերացաւոց, կողի եւ գլխացուցներու, կանանց հիւանդութեանց, ամլութեան, սպիտակ հոսմանց, դժուար ամսական հոսմանց, ցաւոտ աչաց եւ ականջաց, մայրուի, սեւամաղձի եւ այլն : Ամեն տան մէջ սոյն դեղէն պէտք է գտնուի :

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ լնկ. վաճառատունը :

Կ. Պօլլիս, Ղալաթիա

Շատ առնողին դեղը կըլլայ :

~~~~~





### ՏՕՔԹՕՐ ԱՅԷՐԻ ՀԱՊԵՐԸ

Այէրի հապերը մաքրողական դեղերու ամեն յատկութիւնքը ունին: Ստամոքսի, լեարդի եւ աղիքներու անբարեխառնութեանէն յառաջ եկած ամեն հիււանդութեանց դարմանն է: Առանց ուրիշ մաքրողական դեղերու նման յնաս մը տալու, մինչեւ անգամ փոքրիկ տղայոց ալ անվնաս եւ ամենազօ-

րեղ մարդկանց ալ կազդէ: Քրտան տարուան փորձը ցոյց տրւած է որ այս հապերը վերոյ յիշեալ հիւանդութիւնքը ունեցողներուն վրայ ամենալաւ ազդեցութիւն ունին: Գործածելով արեան ներքին աղբիւրներուն մէջ կը մտնեն, անոր շրջանը կը կանոնաւորեն, խցեալ երակները կը բանան, մարդս կը զօրացնեն, տկարութեան պատճառները ջնջելով, արիւնը կը մաքրեն եւ սնունդը հաւասարապէս բոլոր մարմնոյ մէջ կը բաժնեն: Այս ամենուն մէջ պնդութիւն, մարսողութեան տկարութիւն, գլխացաւ, ստամոքսի ցաւ, մայասըլ, փորհարութիւն, լեարդի տկարութիւնք, դեղնութիւն, կողի ցաւեր, երիկամանց ցաւ, յօռուածացաւ, որովայնի որդեր, ջրգողութիւն, կանանց պարբերականին եւ մնալը, ցաւա-



լի պարբերական, անդօրու-  
 թիւն, խուլութիւն, մասնաւոր  
 կուրութիւնք, անդամալուծու-  
 թիւն, եւ այլ ջղային տկարու-  
 թիւնք այս հապերով բժշկուած  
 են առանց շատ օրեր անցը-  
 նելու : Այէրի այս հապերն, որ  
 հասարակութեան եւ բժշկաց  
 յարգանքն ու ընդունելութիւնը  
 այս մասին գրաւական մի են,  
 ամենաաղքատն անգամ կրնայ  
 իւր տունը ունենալ, վասն զի  
 շատ աժան են :

Կը ծախուի Ղալաթիա Ս. Մ.  
 Մինասեան եւ Ընկ. Վաճառա-  
 տունը . շատ առնողին զեղչ  
 կըլլայ :



**ՉԷՐՐԻ ԲԷԲԹՕՐԱԼ ՏՕԲԹՕՐ ԱՑԷՐԻ**

Կուրծքի հիւանդութեանց հա-  
 մար կեռասէ բաղադրեալ սոյն  
 աղնիւ զեղը, կոկորդի եւ թո-  
 քերու հիւանդութեանց զէմա-  
 պահով եւ օգտակար միջոց մի  
 է եւ յարմար ամեն սեռի եւ  
 հասակի մարդոց համար : Տա-




բիներու փորձը աշխարհիս ցոյց տուաւ որ այս դեղը, թորքային հիւանդութեանց բժշկութեան մէջ մարդուս ծանօթ եղած դեղերուն ամենէն ապահովն է եւ անոգուն: Միայն այս պատճառաւ է որ Ամերիկայի գեղջկական խրճիթէն մինչեւ Եւրոպայի թագաւորական պալատ-

ները ընդունուած է: Այս դեղը մասնաւորապէս միջոց մի է պաղ առնողներուն, հաղի, կապուտ հաղի, կոկորդի բորբոքմանց, շնջարդելութեան, (քուշ պօղան) շնչափողի բորբոքմանց եւ թորքախտի:

Ամեն տուն պէտք է ունենայ սոյն դեղէս, թէ որ առանց մեծամեծ ծախուց իւր տան բժիշկն ըլլալ կուզէ:

Կը ծախուի Ղալաթիա Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Վաճառատունը:





ՍՈՒԹԻՆԿ ՍԻՐԸՔ

Երախայից դիւրաւ ակռայ հանել տալու համար Տիկին Ուինսօլին պատրաստած այս նշանաւոր օշարակը մայրերուն ուշադրութեանը կը յանձնենք :

Երախայք երբ ակռայ հանել կսկսին , թէ իրենք եւ թէ ծընողք , մանաւանդ մայրերը , մեծամեծ նեղութեանց կենթար-

կին , եւ յաճախ բազում մանկտիք չկարենալով այն դառն ցաւոց դիմանալ ծաղիկ հասակնուն մէջ գերեզման կիջնին : Տիկին Ուինսօլի այս հոչակաւոր օշարակը ծնողքներն այն տքնութիւններէն ազատելէ զատ նաեւ խեղճ երախայներն ալ տանջանքներէ , ցաւերէ եւ գերեզմանէն փրկող եւ անոնց ակռաներուն բուսնիլը դիւրացնող յաջողէի եւ «պոյ՛ք բաղադրութիւն մ'ըլլալը թէ Ամբրիկայի եւ թէ Եւրոպիոյ մէջ փորձով ստուգուած է :

Այս օշարակը ստամոքսը զօրացնելու յատկութիւնն ալ ունենալով մանկանց փորի ցաւերն եւ փորհարութիւննին դարմանելու համար ալ կը գործածուի : Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Վաճառատունը : Շատ առնողին գեղջ կըլլայ :







ՁԿԱՆ ԻԼՂ


Ձկան իւղը շատ մը հիւանդութեանց ամենէն աղէկ դեղը ճանչցուած եւ փորձով ալ այնպէս ըլլալը ստուգուած է, սակայն երկու պակասութիւն ունենալուն համար բազումք զըրկուած են անկէ օգուտ քաղելէնախ իր խիստ անախորժ համը որ շատերու սրտի խառնուք կը պատճառէ, երկրորդ հեղուկ իւղ լինելը, որ առանց ստամոքսին մէջ մարսուելոյ շուտով աղիքները կերթայ, որով իւր բուժիչ տարրը մարմնոյ ամեն կողմը չկրնար տարածուիլ, Քուէրու անունն Ամերիկացի տարրալոյծը սոյն երկու թերութեանց առջին առած է

մասնաւոր դործողութեամբ ձկան իւղը †եւեւ փոխելով: Ձկան իւղի †եւեւ կերուած ատեն անախորժ համ բնաւ չը տայէ զստամոքսին մէջ կամաց կամաց հալելով կը մարսուի եւ մարմնոյ ամեն կողմը կը տարածուի իւր բուժիչ զօրութիւնը: Յիշեալ օգտակար յատկութեանցը համար այս †եւեւ ամեն տեղ մեծ յարգ գտած է: Մէկ խանութի դրալ †եւեւ հաւասար է մէկ ապուրի դրալ հեղուկ իւղին:

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Բնկ. Սմերիկեան Վաճառատունը Ղալաթիա. Բէրլինյէմպէրադար:

Շատ առնողին զեղչ կըլլայ:





ԼԻԳԻԿԻ ՄԻՍԻ ՀԵՂԱՆԻԻԹԸ

Միտին անուցիչ Բուր մասերն սորամէջ բովանդակեալ եւ կեդրոնացեալ են . Անգղիոյ , Գերմանիոյ , Գաղղիոյ , Ռուսիոյ եւ Հօլանտայի եւ այլ տերութիւնք զանի ընդունած եւ վաւերացուցած են : Միտի հեղանիւթն պարունակող իւրաքանչիւր աման Լիպիկի ստորագրութիւնը իւր վրայ կը կրէ . ա-

նըստորադիր ամաններն խարդախեալ են , վասնորոյ Լիպիկի կնիքը կը դնենք հոս որպէսզի առնողներն գնած առեննին ուշադրութիւն ընեն :

*Liebig*

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Ամերիկեան Վաճառատունը Ղալաթիա - Բէրլէմպէ - Բազար :

Շատ առնողին զեղչ կըլայ :



ՋԵՐՄԻ ԴԵՂ ՏՕԲԹՈՐ ԱՅԷՐԻ

Այս սարսափելի վիշապը , ըսել կուզեմ , ջերմը , իրամեն տեսակներովը սպաննելու եւ նոցա գլուխը ջախջախելու հա-

մարջամեն ջանք ի զուր էր եղած : Տօքթոր Այէր այս վիշապին գլուխը ջախջախելու միջոց մը գտաւ : Բոյսերէն դեղ մը կը պատրաստէ նա զոր խըմնելով, ջերմին թոյնը իսպառ կը ջնջէ եւ մարմինը նորա ազդեցութենէն կը փրկէ : Ուրիշ դեղերու նման, հիւանդը ուրիշ ցաւի մ'ալ չենթարկէր : Հազարաւորք բժշկութիւն գտած են այս դեղէս, առանց ուրիշ դէշ ազդեցութիւն մը կրելու : Բժշկական հազարաւոր վկայութիւնք սոյն դեղիս օգտակարութիւնը կը հաստատեն, եւ հազարաւորք որ այս դեղովս կատարեալ առողջացած են, այսօր իբր կենդանի վկայներ, նորա օգտակարութիւնը կը յայտնեն : Զերմ ունեցողները թող չյուսահատին ուրեմն, զի ի շնորհս Տօքթոր Այէրի, անսապահով եւ դիւրամատչելի

դեղ մը, զոր ամեն մարդ ալ կրնայ ստանալ :

Կը ծախուի Ղալաթիա Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Վաճառատուն :

Շատ առնողին դեղչ կըլլայ :



ԲՍՆԱՍԷ

Ընտանեաց անհրաժեշտ կարեւոր եղող այս համայնաբոյժ դեղը, հետեւեալ հիւանդութեանց եւ ցաւոց համար աշխարհիս վրայ նմանը չգտնուած դարման մ'է :

Ստամբուլի ցաւի եւ կողացա-




ւի, հարրուխի, Ղղացաւի, փոր-  
հարութեան, պալարաց եւ վէր-  
քերու, աղեաց փտութեան, քօ-  
լէրայի, ցրտէ խայթուողաց, ձե-  
ռաց ձայթմանց, կոնակի ցա-  
ւի եւ ջերմի :

Այս դեղը միայն բուսական  
բազազրութիւն մ'ըլլալով սոյն  
հիւանդութեանց լաւ դարմա-  
նիչ մ'է, թէ դրսէն եւ թէ  
ներսէն կը գործածուի : Կողա-  
ցաւի եւ ստամոքսի տկարու-  
թեանց նաեւ փողի վէրքերու  
համար չաքարախառն ջրոյ մէջ  
անուշի դրգալ մը այս դեղէն  
դնելով խմելու է : Ծունկի եւ  
մէջքի ցաւոց ու եէկ համար,  
դուրսէն մարմնոյ ցաւած կողմը  
այս դեղով շփելու է, ահուայի  
ցաւի համար կտոր մը բամպակ  
այս նիւթով թրջելով ահուային  
վրայ դնելու է, կրակէ եւ տաք  
ջրէ այրածի նաեւ դանակի վէր-  
քերու համար այս դեղէն վրան

դնելով կապելու է : Ջերմի հա-  
մար ալ շատ օգտակար է այս  
դեղը եթէ կուրծքը ասով լաւ  
մը շփուի :

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան  
եւ Ընկ. վաճառատունը : Շատ  
առնողին դեղէ կըլլայ :



ԱԼԷՆԻ ԹՈՔԱՅԻՆ ԲԱԼԱՍԱՆ  
Թոքախտ . — Այս սարսափե-

լի հիւանդութեան համար մինչեւ ցարդ այնպիսի դեղ մը գտնուած չէ որ Ալէնի Թորքային Բալասանին յատկութիւնը ունենայ եւ անոր չափ յաջողելի ըլլայ, այս անդուգական գեղը, որ բաց ի թորախտէն՝ շնջափողի, թորքի եւ շնջառութեան ամեն տեսակ հիւանդութիւններն ալ կատարելապէս կը բուժէ, բժշկաց վկայութիւններովը վաւերացեալ է, բոլորովին անմիաս նաեւ հողի ալ միակ դարման է :

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. վաճառատունը : Շատ առնողին զեղչ կըլլայ :



ՊՐԱՌԻՆԻ ԴԵՂԱՀԱՏԵՐԸ

Մանրաշնչութեան, հարբութի, թորքային եւ շնջափողի հիւանդութեանց եւ որկորացաւի միակ դարման է, այս գեղահատերն երգիչներու, երաժըտաց եւ առնախօսաց ուշադրութեանը կը յանձնեմք :

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. վաճառատունը .  
Շատ առնողին զեղչ կըլլայ :





ՊՐԱՌԻՆԻ ՈՐԴԵԱԹԱՓ ԴԵՂԸ

Բազում հիւանդութիւնք ազիքներու մէջ եղած որդերէն կը պատճառին, որոնց դէմ ամենազգու եւ յաջողելի դեղ մ'է Պրատուսի այս դիւար: Ան-  
փնաս դեղ մ'է այնպէս որ ամենափափուկ մանկանց իսկ փոքր ինչ փնաս չտար: Որդ ունեցող մանկունք պէտք է իսկոյն դարմանել, ապա թէ ոչ երկարատեւ հիւանդութեանց ենթակայ կրլլան:

Կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Վաճառատունը Կ. Պօլիս. Ղալաթիա — :




Թէ երկրագործութեան մէջ եւ թէ ընտանեաց մէջ ջուրը կարեւոր պիտոյք մ'ըլլալով, ջրհաններն ալ ամենակարեւոր



միջոցներ են պէտք եղած ջուրն հայթայթելու : Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Ամերիկեան Վաճառատունը ամեն տեսակ երկաթ ջրհաններ դիւրամատչելի գնով կը վաճառին. Յէն մինչեւ 25,50 Խոլան՝ հորերէն առատ ջուր հանող ջրհաններ միշտ պատրաստ կը գտնուին յիշեալ վաճառատունը :



ՄԻՍ ԾԵՇՈՂ ԳՈՐԾԻՔ



Ահա գործիք մ'ալ որով կըր-

նայ մէկը քիչ ատենի մէջ բաւական միս ծեծել առանց չարաչար աշխատութեան . արժանի է որ ասի ամեն ընտանեաց խոհանոցը գտնուի քանզի թէ արգելւնաւոր եւ թէ գնոյն խիստ դիւրամատչելի է :



կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Վաճառատունը :

Ղալաթիա


Ասոնցմէ զատ Ս. Մ. Մինասեան եւ Ընկ. Ամերիկեան Վաճառատունը կը գտնուին կաթէն կարագ հանող գործիքներ , աղօրիքներ , արօրներ , պարտէղի մշակութեան վերաբերեալ եւ այլ կարեւոր գործիքներ եւ այլն եւ այլն :



— 156 —  
ԿԱՐՈՑ



— 157 —  
ՔԱՐԵՔԼԱ





ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐ



ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐՆ

Երիտասարդաց եւ պատան-  
եաց ամենակատաղի ծածուկ  
Թշնամին կը նկարագրէ :

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐՆ

Երիտասարդներն եւ պատա-  
նիներն գերեզմանէն կզգուշա-  
ցընէ :

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐՆ

Երիտասարդներն եւ պատա-



նիներն խաւարէն 'ի լոյս , մա-  
հէն 'ի կեանս կառաջնորդէ :

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐՆ

Յուսահատեալն կը ջալերէ ,  
անկեալն կ'վերականգնեցնէ :  
տկարն կը բուժէ , թշուառն  
կերջանկացնէ :

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐՆ

Կը ծախուին ամեն գրավա-  
ճառաց քով : Գին 5 ղուրուշ :

Վ.ԵՐԶ



0737

2013

« Ազգային գրադարան



NL0032161

